



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




LGA

✓ 1094

1999


Մ. Յ. ՀԻՍԱՐԵԱՆ



ԴԻԻԱՆ

ՈՐ Է

ՏԱՂԱՐԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ

1871

1537

2p. 1094

91094-60

Դ Ի Ի Ա Ն

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ն Ե Ր Ա Շ Ո Ւ Թ Ի Ի Ն

Առաջիկայ Տաղարանս իւր համանուն հաւաքմանց հետ ուրիշ յարաբերութիւն չ'ունի բայց միայն զչափս որով գրեալ է : Տաղարան էր առ նախնիս ծաղկաքաղ երգոց հոգեւորաց երանաշնորհ հայրապետաց մերոց : Իսկ Տաղարան է յարդիս հաւաքածոյ խառնաշփոթ հոգեւոր տաղից հետ երգոց խընճոյից եւ ողբոց հեծութեան զանազան քերդողաց : Ուստի կանխաւ յուշ առնեմք թէ առաջիկայ իջից մէջ ոչ նախնեաց պատկառելի վսեմութիւնն է գլատելի, ոչ յետնոց ճարպիկ հանճարն, որք ընդ աւնուամբ Ոսկիփորկի եւ Տաղարանի սովոր էին զամէն ազգի ազգի գրութիւն կամ քերդուած հաւքել 'ի միասին եւ պահել 'ի մոռացութենէ :

Պարսից քերդողաց սովորութիւն է աւանդել իւրաքանչիւր զիւր քերդուածս 'ի մի գիրք, զոր անուանեն Տիփան, ուստի մերս Գիւան, այս է տեղի պահեստի կամ դարան յիշատակաց : Այս կարգ քերդողաց գերահռչակ պարագլուխ կը համարի Էջ-

Քեզի իւր սքանչելի Տէվանան : Վաղուց ծանօթ էր
առ մեզ իսկ այս օրինակ քերդութիւն , որոյ հե-
տեւողք եղած են երգիչք Կաւկասեան գաւառաց ,
կոչեալք Աշուղ , Պարսիկ անուանակոչութեամբ (Աշուղ) :
Յայսմ կարգէ են Սայադնովայ , Ազբար Ադամ եւ այլք ,
որոց մականուանք իսկ պարսկերէն բարբառով նշա-
նակեն Սուրհանդակ , Սերտօղ , եւ այլն :

Սոցա երգերն , լի գեղեցիկ իմաստիւք եւ եռան-
դուն ոգւով , պիտի մնան իբր նախատիպ գաղա-
փարք պարսկական կամ արեւելեան քերդողութեան :
Յաւալի է որ պարսիկ բառից յաճախութիւնն շատ
հեղ անհասկանալի յարդարէ զնոսին : Իբր այն թէ
աշխարհիկ բարբառս անկարօղ յարտաբերել զյորդա-
ռատ զգացմունս եւ զիմաստս վսեմական , առ հարկի
զակատիցին յաղբիւրս օտարս : Յիրաւի գռեհիկ աշ-
խարհաբարն անզօր է 'ի հայթայթել զամենայն պայ-
մանս ճոխ եւ յղկեալ լեզուի : Սակայն աւասիկ է
զրաբարն լի գանձուք փարթամութեան եւ թննմա-
նօրինակ վայելչութեան : Եւ ո՞ր այն է լաւագոյն ,
գլխմե՞լն առ բնական աղբիւրն մեր , թէ քերել առ
ոտս օտարին կամ սողալ 'ի ստորս ռամկական ոճոյ :

Քանի մի խօսք այլ 'ի վերայ չափաբերութեան :
Յայտնի է թէ պարսիկ տաղաչափութիւնն յօդովք
(հարէ+է) բաժանէ յիրերաց զմիջոցս հանգստեան ,
ինչպէս Հելլենականն շեշտիւք : Իսկ արդ , կար-
ծեմք թէ հայերէն առողանութիւնն ընդունակ է ,
ինչպէս յունականն , 'ոչ միայն 'ի սղութիւն եւ 'ի
կարճութիւն , որպէս ոմն երբեմն , Բագրատունին , ցոյց
եւ Շարակնոցաւ , այլեւ , մերձակից 'ի բնէ եւ զու-

զորդ ազգակից պարսկերէն լեզուին, 'ի յօդս եւ 'ի
խաղս, այս է յեղանակաւոր անդամատութիւն եւ
յերկար միջոցս հանգստեան: Այս ոճով գրեալ են
շատ երգք Սայադնովայ եւ Ազբար Ադամայ, ըստ
օրինակի Շահնաֆէն Ֆիրտէվսիի եւ Սատիի Կիւլի-
ֆանի: Սոյն չափով է նաեւ Խիւարի Կաֆէն մեր, զոր
առ 'ի փորձ շարագրած ենք, հնգետասանոտեան եւ
յերկուս միջոցս բաժանեալ, իւրաքանչիւրն բաղ-
կացեալ յեօթն եւ ութ վանկից: Այս է պարսկական
մեծաչափն, որոյ բազմադիմի փոքրագոյն չափեր
այլ կան, միշտ նոյն եղանակաւոր ձեւոյ վերայ գա-
ղափարեալ: Յանկալի էր որ Կաւկասեան երգչաց օ-
րինակն մեր տաղաչափութեան օրինաց տաղակալի
միաձեւութիւնն այլափոխէր, խնդիր մի զոր յու-
ղելոյ եւ լուծելոյ մեծ հարկ ի վերայ կայ: Թէպէտ
զեղծ սովորութիւնն եւ խանդարեալ ճաշակք առ
նորաձեւութիւն կամ յանդգնութիւն համարիցին
զայն զոր մեք անհրաժեշտ պէտս համարիմք, սա-
կայն կարծեմք եթէ այս խորհուրդն մեր չ'ըլլաց
բոլորովին ցամաք եւ ապառուժ 'ի ձեռն աջողակա-
ցոյն գրչաց:

Դ Ի Ի Ա Ն



Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Վ Է Պ Ք



Շ Ա Ռ Կ Ե Ն Ա Յ

Արեւելք անդրստին որրան իմաստութեան
եւ տաճար բանաւոր երգարանաց գլխան :
Վաղուց սովորութիւն է մէջ արեւելեաց
Հանդէս ասպարիզի կարգալոյ քերդողաց ,
Ելնել 'ի բանակուիւ իբրու սէգ ըմբշամարտ ,
Առնել իրարու հետ հանճարոյ գօտեմարտ ,
Եւ որ յախոյենէն կանգնէ ըղյաղթանակ
Այր զընկեր նըւաճեալ , տանի ըղմըրցանակ :
Երբեմն էր ասպարէզն 'ի Պաղտատ և Պասրա ,
Ուր քերթողաց գլրդիւ ինքըն տայր խալիֆա ,

Յետոյ 'ի Պարսկաստան, ուր հրուշակի Շիրազ,
 Շիրակայ պէս բերրի, Գողթան պէս 'ի Շահրապ,
 Գողթան, ուր հայրենիք են գինւոյ և բամբուռան,
 Շիրակ, յորմէ Շիրազ ժառանգեաց զերկոսեան,
 Ուրանօր երգեցին Սատին և Ֆիրտէվսի,
 Ուր Շահ-Մահմուտ կարդայր նըշան ասպարիզի :

Քերթօղ մի 'ի Շիրազ էր անուն Մուսթաֆի,
 Ի հանճար գերապանծ և եռանդուն սոփի .
 Հըմուտ էր ոչ միայն արուեստին մուսայից,
 Այլ և հոգեկանաց երկնաւոր իմաստից,
 Այլ և երկրաւորացըս պէսպէս գիտութեանց,
 Նաեւ եւրոպական շատ լեզուաց և ուսմանց,
 Մինչ զի ընդ ամենայն երկիր բարբառ նորուն
 Եւ մինչեւ 'ի ծագս ել աշխարհի իւր անուն :
 Եւ յամենայն կողմանց քաղաք 'ի քաղաքէ
 Գային 'ի տեսանել ըզՇէյխըն յիւր Թէքէ,
 Գային և յագէին յաղբերէն յորդառատ,
 Ընդունարան բանին և լուսոյ ճառագայթ :
 Քերթօղի սրբազան անձն 'ի վաղուց հետէ
 Միանգամայն ձայնի իմաստուն, մարդարէ .
 Զի վըշէ 'ի նա շունչ ոգւոյն աստուածային
 Եւ զեղու 'ի սըրտէ բոց հըրոյ երկնային :

Այր ոմն, որ 'ի դասէ քերթօղաց 'ի Գանգէս,
 Եկեալ առ Մուստաֆա և կոչեաց 'ի կըրկէս .
 Եհարց զաստուածախօս ըզՇէյխն հրուշակաւոր,
 — Խընդրեմ եթէ գիտես, ասէ, թէ զի՞նչ է նոր :

Նոր ինչ անլուր, զոր ոչ յաշխարհի ոք ուսաւ,
 Զոր ոչ ակըն ետես և ոչ ունկըն լըւաւ,
 Եւ ոչ 'ի սիրտ մարդոյ անկեալ է տակաւին,
 Նոր ինչ ըսքանչելի, մեծ քան ըղբընաւին,
 Եւ որոյ գիտութիւն չահաւէտ 'ի մարդն է,
 Մանաւանդ թէ աստուածս ըղմեղ անմահս առնէ:
 Այսպէս առաց քերթօղն եկաւոր և յաւել
 թէ խընդրոյն լուծօղին մըրցանակն էր վայել:
 Պահիկ մի լըւութիւն 'ի վիճօղսըն տիրեաց,
 Յորում քերթօղքըն զուշ ամփոփէին մըտաց,
 Ինչպէս ժողովէ զուժ ըմբշամարտ կորովի,
 Յառաջ քան ըղլանջաց լանջըս տալ երկաթի:
 — Ոչինչ է նոր, ասէ նա, ո՛վ քաջ, յաշխարհի,
 Օր աւուր նըմանէ և գիշեր գիշերի.
 Ամէն կին կը շընթէ, ամէն այր կը ցանկայ,
 Ամեն տըղայ ծընած ատեն գոչէ անկայ.
 Ազգք և լեզուք համայն են սերեալք յԱդամայ.
 Եւ կինն է համամայր 'ի նախամայրն եւա.
 Դիւցազունք չ'անցանեն քան ըղդիւցազունս անդր.
 Աղէքսանդր է կեսար և կեսար Աղէքսանդր,
 Ամեն գիրք յիրերաց են օրինակութիւն,
 Զեպուռն է վարժապետ, և այլք իւր ձեռասուն.
 Մարդը գաղանի հետ բոլորովին նըման,
 Զերթ երկու կաթիլ ջուր չ'են եւել զանազան.
 Ներկայն է միշտ անցեալ, անցեալն է ապագայն,
 Ամենայն ինչ է հին, նորն է մահ մի միայն:
 — Ոչ թէ մահ, հինաւուրց է նա քան զամենայն,

Ասէ հակառակորդն , այլ դեղ անմահութեան ,
 Սա է նոր զոր խնդրեմս և յուսամ գըտանել ,
 Յառաջ քան ըզմահուն ժանեաց զիս յօշոտել :
 Կորուսեր , դու ո՞վ քաջ , ըզմըրցանակն որ իմ : —
 Ժըպտեց աստուածախօս ալէզարդ ծերունին .
 — Գիւտս այս չ'է 'ի նորոյ , ասէ , այլ վաղեմի .
 Իսկ քո չէ՞ ընթերցեալ ճէլալէտտին Բուամի ,
 Որ ըղգեղ զայս ծանեաւ , որ ըզգըլուխն հատեալ
 Ի Պասրայ 'ի Պաղտատ ած ընդ անթով տարեալ .
 Որ 'ի գիրըս զեղուն գերիմաստ հանճարով
 Ըզգիւտն հըրաշալի պատմէ անճառ հողւով .
 «Ծառ , ասէ , ոյր պըտուղ բաշխէր զանմահութիւն
 Էր յԱդին . Իսկ երբ մարդ կորոյս զանմեղութիւն ,
 Չեռինք տէրունական խըլեալ արմատաքի
 Բարձին յերկրէ յերկին ըզծառն հիանալի» :
 Զի թէ ոչ , պէտք էին զամէն ինչ փոխելոյ ,
 Ըզտարերց սաստկութիւն , ըզտօթ ամարանոյ ,
 Զօրէնս յաւիտենից կարգեալ տիեզերաց ,
 Զօրէնս իսկ մարդկեղէն և ըզմարմնոյ կազմած .
 Նաեւ զամաց շըրջան 'ի կարգ անճառելի ,
 Որ դրոշմեն 'ի ճակատ կընիք անջընջելի .
 Նաեւ ամենայն շունչ և անբան կենդանի
 Պէտք էր փոխել զիւր վարըս բարուց վայրենի .
 Հարկ լինէր գազանին վայրադ , իբրեւ զոչխար ,
 Անմեղական վարուք առնել յորջիւր դադար ,
 Կամ հըլու մարդասէր գալ ապրիլ հետ մարդկան
 Առիւծուն և փրդի , օձոյ և տիտեռան :

Այլ որ մեծ քան զամէն և դժուարին 'ի գործ,
 Մարդկային բընութեան նորոգութեան էր գործ,
 Առ 'ի կեալ յաւիտեան յանդորր այր ընդ ընկեր,
 Այն որ սուղ ժամանակ զիրար չէր հանդուրժեր,
 Այն որ քան ըզգազան վայրի է մարդախանձ,
 Որ ըզսուր և ըզմահ անօրհաս ճարտարեաց:
 Դարձեալ հարկ էր ըզհարկս ամենայն մերկանալ:
 Ոչ մանուկ և ոչ ծեր, ամէնն հաւսար ըլլալ:
 Ոչ հարուստ, ոչ աղքատ, ոչ գեղ և ոչ տըգեղ:
 Այլ փոխել զամէն ինչ զոր արար ձեռն անեղ:
 Եւ ո՞ հաճի ընդ այս, ո՞վ է մարդ երկրաւոր
 Որ չըցանկայ լինել գերադոյն թագաւոր,
 Որ ելնէ 'ի գահէն, թողու ըզգաւազան,
 Ի ջանէ 'ի ստորեւ սանդղոց ընկերական:
 Եւ ո՞ր զայնչափ մարդիկ բընակեցուցանել,
 Ոչ անհուն անապատք կարէին իսկ բաւել,
 Ոչ թէ ծով մինչ 'ի ծայր՝ բեւեռային ծագաց
 Փոխէր յերկիր ցամաք ըզկայս սառամանեաց,
 Եթէ դար մի միայն անմահ եղեալ մարդկան,
 Աճէր և բազմանայր քան զաւաղ առ ափան:
 Վասն որոյ խըլեաց տէր, ասէ, ըզծառն և դեղ:
 —Եւ ուր, եհարց հընդիկն, ո՞ւր է արդ նորին տեղ:
 —Ի մահ, պատասխանի արար Մէվլանայն մեծ,
 Ի մահ, յորմէ նոր կեանս առնուլ օրէն է մեղ,
 Ի մահ, յորոյ 'ի բաց, ոչ ինչ նոր յաշխարհի,
 Եւ մահն է մի միայն ծառ կենացն անմահի:

ԾՈՒՌ ԱՇԽԱՐՀ

Քաղքի մը մէջ կայր ատենօք
Ծեր իմաստուն ծաղկած ալեօք •
Տիեզերաց ծիրն ամենայն
Քալած և շատ տեսած էր բան •
Երկրագունտիս ամեն ազգեր ,
Ամեն քաղաք նաեւ գեղեր
Դիտած էր նա և մարդոց բարք ,
Ճարտարութեան գործք և հրնարք •
Եւ այս ամէն այցելութեան
Արդիւնք դիզեց գանձս հրմտութեան :

Ցուրտ ձրմեռուան յերկար գիշեր ,
Երբ ժողովին խիտ ահումբներ
Շուրջանակի վառարանին ,
Ունկըն դընել նրմա գային
Ծերք և տըղայք և կանանի :
Արկածք անլուր բազմագիմի
Եւ աշխարհաց նըկարագիւր

Եւ անհամար զըրոյց անդիւր ,
Աղգք եւ լեզուք ամենեքեան
Գային 'ի վէպսըն յերեւան :

Պատմեմ ձեզ , տեարք , ասաց օր մի ,
Բան որ զըրոյց մէջ չը պատմի ,
Որուն անձամբ ականատես
'ի ականջալուր վըկայ եմ ես .
Էր , ասէ , վայր զարմանալի ,
Քաղաք մեծի թագաւորի ,
Չըգիտեմ ճիշդ յոր աստիճան
Կ'իյնայ լայնքի 'ւերկայնութեան
Կիսագունտիս այս 'ի վերայ ,
Եւ ոչ զանունն յիշեմ հիմա :

Չ'ըլլայ կարծէք եթէ տարբեր
Յայլ քաղաքաց , եղջիւր մ'ունէր ,
Կամ ըստ բանին Ըստրաբոնեան ,
Էր աչք մարդոց 'ի գագաթան ,
Եւ կերակուր նոցա լուտաս ,
Կամ Աժդահակայ կանանց դաս ,
Պառաւ վըհուկ խարամանի ,
Բընակութիւն գետնախըշտի ,
Երկակենցաղ , յուշկապարիկ .
Ո՛չ . այլ նըման մեզ են մարդիկ :

Քաղաք մըտայ կէս գիշերին ,

Լուսաւորեալ նրման օրին ,
 Մըրջնոյ պէս ժիր և փութաջան
 էր ժողովուրդ աստանդական .
 Նաև ձիանն և անասուն
 երթեւեկեն գիշերն 'ի բուն ,
 եւ դըղըրդի սալայատակ ,
 'ի դփմանէն սալասըմբակ .
 Լուսցաւ , և մարդ քուն մըտանէր . —
 Անդ գիշեր տիւ , տիւն էր գիշեր :

Անգործ ոտիւք կը շըրջէի
 Այս թանձրաքուն քաղքին միջի ,
 Աւերակաց քընոյ նրման ,
 Կամ զերթ թըմբիր մարսողական :
 Դուռն ընդ առաջ էր հոյակապ ,
 Մըտի , անդ էր տեղ և տարափ
 Մեծ խընջոյից , հետք զեղխութեան .
 Ընկողմանեալ հանդիսական
 Նընջէր 'ի քուն թանձր և խորդայր ,
 'ի գիներբւոյն կայծակնահար :

Եւի արտաքս . անցի յառաջ , —
 Թըշուառական յահեակ և յաջ ,
 Կարծր գետնին վերայ սըփռեալ ,
 Աւելի մերկ քան թէ զգեցեալ
 Պատառոտուն ձորձ ցընցոտի ,
 Հիւծեալ , թափեալ դոյն ծընօտի ,

Թըմբրեալք քաղցու և 'ի ցըրտոյ
 ֆան թէ ծանրեալ աչք 'ի քընոյ . —
 Անդ մեռանէր հէգն և հարուստ
 Ոմն 'ի քաղցէ և ոմըն կուշտ : —

Անցի յառաջ . — կառք քառաձի
 Տանէր հեծեալ չորք կանացի ,
 Պըճնեալ զարդուց մէջ շողշողուն ,
 Մըրափելով աչքերն անքուն . —
 Էր կանանի ճոխ մեծատան ,
 Հացկերութիւն լեալ կոչնական ,
 Եւ արձակեալ իւրաքանչիւր ,
 Այդուն առնէր դարձ 'ի տուն իւր
 Հանգչել 'ի քուն , պատրաստական
 Երեկոյին գոլոյ հըսկման :

Մինչ արշաւէր փայլակնանման
 Զորից հարսանց կառք 'ի կայան ,
 Անդուստ թափոր սեաւ կուսանի
 Յառաջէր մի զմիոյ կընի .
 Յետոյ բոկոտն և ողջախոհ
 Կրօնաւորաց կըգայր գըռոհ .
 Էին կուսանք քորք գըթութեան ,
 Այլք միանձունք ողջմըտութեան . —
 Էր բընակիչ այս քաղաքին
 Ոմն ամուրի , այլ բաղմակին :


Պալատ մի կայ շատ մեծաշէն ,
 Որու ատեան անուն կոչեն ,
 Ուր իրաւանց 'ւ արդարութեան
 Կ'ըսէին թէ վրճիւ կուտան :
 Ոմն էր փրբած զաչս ընկերին .
 Զերկուս ոսոխս յատեան բերին .
 Յետ շատ խօսից , շատ հարցփորձներ ,
 Արտաքս ելին դատախազներ . —
 Գընաց յանցւոր ձեռն 'ի գլրպան ,
 Իսկ աչք փրբեալն 'ի կախաղան :

Լըռեց այս տեղ ծեր վիպասան .
 Մընաց յապուշ հանդիսական .
 Յետոյ հարցուածք հետաքրքիրք
 Յամեն կողմանց և բիւր խընդիրք
 Պաշարեն զայրն հրրաշարան . —
 Ի՞նչ անուն այս ազգի մարդկան ,
 Ի՞նչ անուն այս քաղաքին էր ,
 Յո՞ր կողմն երկրի նա գըտանէր .
 Ի՞նչ էր լուծումն այս հանգուցին ,
 Եւ ի՞նչ խորհուրդ ծածկէր խորին :

— Ինչո՞ւ խորհուրդ թըլի ձեզ մեծ ,
 Կունտ ծերունին պատասխանեց .
 Ի՞նչ զարմանք են թէ ծուռ աշխարհք
 Երկնաւորին տընկեցին աջք .
 Ինչպէս շինեց մեծ Նիւսրէտտին

Հիմն 'ի վեր տուն երբ առնոյր կին ,
 Որ զայն հիմանց գայր տապալել ,
 Ձերթ պիտի գայ աստ Գաբրիէլ .
 Եւ այն ատեն այս ծուռ աշխարհք
 Կործանելով , կանգնի շիտակ :

Եւ ո՞ւր է ձեր տեսած աշխարհ
 Ուր ամէն ինչ ըլլայ հաւսար ,
 Ուր ոչ հարուստ և ոչ աղքատ ,
 Ոչ անօթի , ոչ վէճ ու դատ ,
 Ոչ բռնութիւն և ոչ ատեան .
 Այլ է անդ գահ արդարութեան :
 Ի՞նչ հարկ լինէր կոչել յայնժամ
 Աշխարհ անուն ըզդրախտ զայն : —
 Իսկ տո՛ւր անուն մեր քաղքին խօլ
 Կ'ուզես փարիզ , կամ Ըստամպօլ :



ԳԱՂՏՆԻՔ ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Մեղամաղձոտ ես շատ անգամ
Գերեզմանաց մէջ ժուռ կըգամ.
Լուռ մունջ, մըտօք վարանական,
Անդ մենաւոր թափառական,
Սիրեմ, հեռի 'ի մարդկանէ
Եւ յերկրաւոր աղմըկանէ,
Զուշ ամիսփել զիմ և խորհել,
Եւ ըզմեռեալս հարցափորձել
Ի պէսպէս շար տապանադրի,
Յոր շատ խորհուրդ պարունակի:
Շատ դարաւոր մեռած մարդկան
Կ'ելնէ յայնժամ յոտն ուրուական,
Դայ և ընդիս լինի ընկեր,
Հետ կը խօսիմք շատ առակներ
Անցեալ, ներկայ և ապագայ
Եւ բիւր հազար նիւթոց վերայ:
Յայնժամ մըտօք վերացական,
Ելնեմ յերկնից բարձր աստիճան,

Եւ մարդկային հոգոց բեռինք
 Ընկճեալ վանին գէթ մի վայրիկ :

Խորասուզեալ մէջ ընթերցման
 Տապանադրի վերտառութեան ,
 Պատահէի երկտող բանի
 Ի սրբաւորաշ վէմ դամբանի ,
 Թէ « Այս տապան է հան գըստեան
 Խուլ և համեր երանական » :
 Այսքան և եթ , և այլ ոչինչ
 Բայց միայն քար ողորկ և ջինջ :
 Շատ խորհելով խորաքընին ,
 Չ'եղէ հասու մրտաց բանին .
 Ի՞նչպէս օրէն խուլ և համեր
 Երանաւոր լինելոյ էր .
 Եւ հանելուկս այս շատ դժար
 Ինձ գերեզման փակեալ մընայր ,
 Երբ ծերունի աստանդական ,
 Տեսեալ զիմ ջան վարանական ,
 Եւ գըթացեալ առ իս արդեօք ,
 Եկաւ ըսաւ ինձ արտորնօք .
 — Մի տաղնապիր , երիտասարդ ,
 Ահա՛ լուծումըն բանիդ այդ .
 Ես համոզեալ եմ թէ բնութիւն
 Է ընդհանուր հակասութիւն ,
 Եւ թէ շատ ինչ է գըլխովին

Ընդդէմ մըտացրս մարդկային :
 Ճըճւոյն խոնարհ ի՞նչ է օգուտ ,
 Ձոր օրինակ , գիտեմ անսուտ ,
 Եթէ մաքրէ 'ի փրշոյ զարտ ,
 Յեցն օձակեր փըրկէ ըզմարդ : —
 Բայց է մըտաց անհասական
 Շատ կարծեցեալ ինչ բընական . —
 Լեզուին ի՞նչ շահ , զոր օրինակ ,
 Եւ ականջաց ի՞նչ նըպատակ ,
 Չըգիտեմ ես , և կարծեմ ոչ
 Թէ բաց ձայնէ ինչ բարձրագոյ
 Կարեն լինել պիտանացու
 Ըզգայարանք ձայնեալ լեզու ,
 Ի բաց առեալ զընդունարան
 Ըզսընընդոց կոչեալ բերան :
 Իսկ ականջաց միակ դիտումն
 Է բընութեան մեր խոնարհումն
 Ի կենդանւոյն նըմանութիւն
 Առ որ ականջն է վեհագոյն ,
 Քան թէ առ այլ շունչ ամենայն
 Չագարակերպ 'ի գործարան :
 Գիտեմ թէ է ոտին պաշտօն
 Տանել ըզմեղ այս տեղէս հոն ,
 Գիտեմ թէ աչք չըկային մեր ,
 Գըլուխս 'ի յորմն հարեալ փըշրէր . —
 Սակայն թէ չէր լեզու 'ւ ականջ ,

Գուցէ կեանքն էր յոյժ դերասքանչ :
 Լեզու , ո՛վ թել հաղորդութեան
 Մարդոյ ընդ մարդ ունայնաբան ,
 Դո՛ւ եւս անօթ այս հեռագրին ,
 Սուր լըսելի , տուն թըմբըկին ,
 Քանի՛ չարեաց բոյն ցիրուցան
 Քանդէր թէ զձեզ փակէր խըցան :
 Ո՞չ թէ այլուր չար բաւական
 էր վիճակել ազգի մարդկան :
 Ի սկըզբանէ անտի լեզու
 Թափէ յականջ թոյն մահացու .
 Սովաւ զեւա օձըն խաբեաց ,
 Սա 'ի դրախտէն եհան 'ի բաց ,
 Սա ծընաւ վէճն ու թըշնամանք
 Սորա շընորհ գիտեն մախանք :
 Եւ ի՞նչ զարմանք են թէ որ մէկն
 Առանց սորա ապրի երնէկ .
 Երանի՛ ում բոլոր կենաց
 Մէջ ոչ լըսեց և ոչ խօսաց ,
 Ինչպէս էր այս լուսահոգի
 Որ խուլ և համր էր 'ի ծընէ :
 Այսպէս ասաց ինձ ծերունի ,
 Յետոյ 'ի բաց զընաց ինծմէ :

Յիմար էր մեծն Հերակլիտէս ,
 Եւ բըթամիտ Դիմակրիտէս ,
 Տակառաքնակ շընիկն անմիտ :

Ոչ արտասուք զօրեն , ոչ խինդ ,
 Ոչ 'ի լերինս , յանապատի
 Հալածական վրտարանդի ,
 Եւ ոչ ճըգնել խոտաճարակ
 Կարէ ամեն երկրաբընակ :
 Այլ համր և խուլ պէտք են լինել
 Կեանս անվըրդով առ 'ի գրլել :
 Է առասպել մըտերմութիւն ,
 Եւ սէրն է լոկ շաղփաղփութիւն ,
 Պատրանք ունայն մըտաց մարդկան :
 Այլ ճանապարհ երջանկութեան
 Է լըսելեաց 'ի խըլութիւն
 Եւ 'ի լեզուին մեր համրութիւն :

Ա Ր Ծ Ա Թ

Ի մայր քաղաքն Ըստամպոլի
 Երբեմն էր այր առաքինի ,
 Յոյժ իմաստուն և խոհական
 Եւ հետեւող արդարութեան .
 Իւր նըմանեաց բարի առնել
 Եւ 'ի չարէն սիրէր խորշել ,
 Շատ այլ ձրրքեր ունէր պարծանք :
 Մի միայն էր նորա յանցանք .
 Նա չ'ունէր արծաթ ,
 Ըսին . — Անշահ մարդ :

Խեղճ մարդ , սրնած որբ 'ի ծնողէ ,
 Շատ զըրկանաց նա սովոր է ,
 Կանուխ բացաւ աչօս խորին
 Թարմ ճակատուն վըրայ քըրտին ,
 Կանուխ անոր ոտքն ու դաստակ
 Պատառօտեց փուշ և տատաակ ,
 Խեղճն կանուխ գիտաց ըղցաւ .

Պատառ մ'հացի գինըն ուսաւ :
 Այլ չ'ունէր արծաթ .
 — Տես ի՞նչ ապուշ մարդ :

Բարետեսիլ, գեղայարմար,
 Աչեր ունէր թուխ և պայծառ,
 Անուշ նայուածք հըրաշալի,
 Բարձրահասակ և նազելի,
 Շատ գեղեցիկ օրիորդաց
 Հըրապուրիչ էր ինք մի խայծ .
 Բայց իբր յանարդ անդամալոյծ
 Ոչ ոք 'ի նա աչըս կառոյց :
 Զի չ'ունէր արծաթ,
 — Ո՛հ ի՞նչ տըգեղ մարդ :

Մարդկան վըրայ յոյս չ'էր դըրած,
 Բոլոր իր յոյսն էր առ Աստուած,
 Հաստատութեան ըսքանչեւաց
 Եւ կազմութեան տիեզերաց,
 Այլ և հրաշից բնութեան բոլոր
 Նա խելամուտ էր օր քան զօր .
 Նաեւ զուսումն ազդի մարդկան
 Դիզէր յիւր գանձն իմաստութեան :
 Բայց չ'ունէր արծաթ,
 Ըսին . — Ի՞նչ խենդ մարդ :

Ինք որ գըթած էր մարդասէր ,
 Մէկ մըտերիմ սիրտ չէր գըտեր .
 Ոչ բարեկամ , ոչ կարեկից .
 Ոչ նեցուկ մ'էր նըմին , այլ կից :
 Ոչ թէ մարդու տեղ չ'էր ինքնին ,
 Եւ ոչ անբան , ոչ ըստուերին ,
 Շունչ մի մեռեալ , դի անկենդան
 Ըսին , 'ւ անոր քովէն անցան :
 Ոսկի և արծաթ
 Չունէր , — նա չէր մարդ :

Այրն իմաստուն տեսաւ թէ չէ
 Մարդ 'ի քաղաք իւր մարգարէ ,
 Շալկեց մախաղ , օր մի ելաւ
 Քաղքին ասաց մընաս բարեաւ .
 Շատ ժամանակ օտար երկիր
 Պանդըխտեցաւ նա ժըրաժիր .
 Աստուած օրհնեց ըզջան նորուն
 Բաղդ նըմին ետ ժըպիտ ողջոյն :
 Ոսկի և արծաթ
 Շահեցաւ նա շատ :

Դարձաւ եկաւ իր հայրենիք
 Արծուի նըման գըլուխ բարձրիկ ,
 Կամ ինչպէս էր մեծըն կեսար
 Երբ յաղթականն անցաւ կամար :
 Աչք 'ի յօսկւոյն խըտըղելով

Խոնարհեցաւ աշխարհ ահով,
 Եւ ընդ առաջ ցընծութեամբ եւ
 Ոսկւոյ բազնին երկիր պագեւ:
 Ոսկին և արծաթ
 Աստուած ըրին մարդ:

Պարտք մ'է ինծի ըսել սակայն,
 Ի վրկայել ճշմարտութեան,
 Թէ այս փորձոյ մէջ քուրային
 Ամենայն ինչ չ'էր զուտ ոսկին.
 Կ'ըսեն նաեւ ձայնիւ ցածուն
 Թէ փետուրք ինչ արդարութիւն
 Չըգեց այն տեղ եւած ատեն.
 Բայց ասոնցմէ մեզ ի՞նչ փոյթ են.
 Ունէր շատ արծաթ,
 Ըսին. — Ի՞նչ լաւ մարդ:

Դարձեալ երբ ինք օտար աշխարհ
 Գընաց, թողուց գիրքն արհամարհ,
 Գոցեց էջերն իմաստութեան
 Եւ չըտուաւ անուն ուսման.
 Իրաւ ալ է թէ սա որդի
 Է Աստուծոյ նախանձորդի,
 Եւ թէ երբէք իմաստութիւն
 Չէ լըծակից վատ հոգերուն:
 Բայց կ'ընէ արծաթ
 Իմաստուն ըզմարդ.

Միջօրէին արեւ ջերմիկ ,
 Տօթ բացօթեայ և ցուրտ հողմիկ
 Նորա այտերըն կարմրորակ
 Թոռմեցուցեր էին ցամաք ,
 Խոժոռադէմ սեւամորթիկ
 Կը նըմանէր 'ի թուխ խափշիկ .
 Բայց , է ոսկին լաւ քան ըզտես ,
 Ըսին կանայք , ի՞նչ փոյթ է մեղ :
 Ունի ոսկի շատ ,
 Այս ի՞նչ աղւոր մարդ :

Եկէք , պատմեմ ձեզ նոր հըրաշք
 Զոր ամէն օր տեսնէ աշխարհք .
 Էր այր արդար , ըսին թ'է չար ,
 Էր իմաստուն , ըսին տըխմար ,
 Էր գեղանի , ըսին տըխեղծ ,
 Ի՞նչ նոր հըրէշ Աստուած ըստեղծ .
 Մարդ թէ անբան է կենդանի ,
 Ոչ ունի ոսկի ,
 Այս ի՞նչ տեսակ խելագար մարդ .
 Եւ ոչ իսկ արծաթ :

Յանկարծ այս հրէշ փոխակերպէր ,
 Զարին ըսին թէ արդար էր .
 Տըխմարն եղաւ այր իմաստուն ,
 Տըգեղն եղաւ գեղով սիրուն .
 Ոսկի , ո՛վ սուրբ , որուն համար

Բռին աստուած ՚ի վեր և վար ,
 Դու մեծադօր առնես ըզմարդ-
 Որ ունի արծաթ ,
 Խոնարհ առնես զայր որ չ'ունի
 Արծաթ և ոսկի :

ԽԸՆ ԴԻՐ ԵՐՋԱՆ ԿՈՒԹԵԱՆ

Յերկրին Բրիտանական է ախտ մի ահարկու ,
 Կէս մի տարափոխիկ և յաճախ մահացու ,
 Ախտ չար անբուժելի , որուն նրման չըկայ
 Ուրեք հիւանդութիւն երկրագունտիս վըրայ .
 Որուն ճար մի 'ի ծայր հըրազինու գըտան ,
 Որուն անուն ըֆօն անգլիարէն կըտան ,
 Որ 'ի հայու մօ յըստակ թարգմանի խենդութիւն ,
 Եւ զոր անգղիացին գըրէ յիմաստութիւն :
 Յաճախ այս ախտին զոհ է հարուստն ու փարթամ
 Որուն այլ չըպակսի բայց մեռնիլ տարածամ .
 Որ յաճախ տաղտկութեամբ այս միակերպ կենաց
 Տարեալ սըրտին ձանձիրն յամէն կողմն աշխարհաց ,
 Խընդրէ և ոչ գըտնէ զոր ինչ ոչ գիտէ իսկ ,
 Եւ ոչ ինչ գոհութիւն գըտանեն նորա իղձք :

Այր մի էր 'ի դասէս այսորիկ , մեծատուն ,
 Ճոխ իբրեւ կըրասոս , բազմակին զերթ Մորմոն ,
 Ոսկւով աչքն առաւել քան ըզբովքս լըցեալ ,

Կանաչի նենգ ու թեամբ սիրտն էր յոյժ յագեցեալ
 Պէտա ինչ չունէր և ոչ գործ մի ըզբաղանաց :
 Ի՞նչ էր աշխարհի մէջ նորա պաշտօն կենաց ,
 Երանելին զանձն իւր գըտանէր եղկելի ,
 Եղկելի 'ի հազար և բիւր գանձ լիուլի :
 Յայնժամ ել 'ի խընդիր ընդ ոլորտըս երկրի
 Փոքր ինչ երանութեան որով ոգին բերկրի .
 Խընդրեաց և ոչ եգիտ , ոչ յարքունի դարպաս ,
 Ուր խեղդամահ առնէ զեղուն գանձուցն ըսպաս ,
 Եւ ոչ սովալըլուկ խեղճ յաղքատին տընակ ,
 Ոչ աստ և ոչ այլուր 'ի ծագաց մինչ 'ի ծագ . . .
 Ամենուրեք տաղտուկ , մարդն ամեն տեղ թըշուառ :
 Ապա յուսահատեալ , զէն 'ի ձեռին էառ
 Էառ և ըզմատունս 'ի զըսպան գընտակին
 Մերձեցոյց . . . վայրիկ մի , և փըշէր նա զոգին . . .
 Ուշ 'ի կուրծըս լինէր յանկարծ այս Կըրասոս
 Թէ լըսած էր լինել Տէրվիշ մի յեգիպտոս ,
 յեգիպտոս ուր երբեմն էր դիտութեանց օրրան ,
 Ուր ցայսօր արեւելք 'ի փառըս իւր պանծան .
 Ո՞վ գիտէ ի՞նչ գանձեր դեռ ծածկէր այս երկիր ,
 Մի գուցէ Տէրվիշն այն լուծանէր զիւր խընդիր :
 Եթող զէնն 'ի ձեռաց , գործն էր իմաստութեան ,
 Անց յեգիպտոս առնել խընդիր երանութեան .
 Եգիտ ըզմէվանայն ըզմեծանուն Տէրվիշ ,
 Ի կարգէ Պէթաշի , ծամելով զիւր Հաշիշ ,
 Լեռնական ծերունւոյն ժառանգ դեղօրէի ,
 Ժառանգորդ Էւրաբն 'ի հազար բիւր հիւրի :

— Ով ծերունի, ասէ, խընդրեմ երանութիւն .
 Ամէն կողմն աշխարհի խընդրեցի, էր թագուն,
 Յերոսալայ մինչ 'ի ծայր ծագաց ասիական .
 Արդեօք հընար ի՞նչ է գըտանել այսրէն զայն :
 — Այս միայն է խընդիր քոյին, ետ պատասխան
 Ծերունին, որ հըմուտ հրաշից եղիպտական,
 Գիտէր ըզհին և նոր զամէն արուեստ մոգուց,
 Որով է պանծալի եղիպտոս 'ի վաղուց :
 Քանի՞ ունկի խընդրեա. — Քանի՞. — Այո՛ քանի,
 Կէս ճշգոյ վաճառեմ իւրաքանչիւր ունկի .
 Բայց լաւն է, և բաւեն օրն երկու հատիկներ,
 Կ'ուզես ա՛ռ ու փորձէ, կ'ուզես, հոգ չէ, մ'առնե՛ր :
 Անդ լիացին առաւ խոշոր հատ մի կըլլեց :
 Խակոյն մէջ երակաց նորա թըմբիր սահեց,
 Եւ հոն հոսած արեան շըրջանըն գաղըրեցուց,
 Եւ անոնց թունտն արգել, և զարկերըն կեցուց,
 Եւ հազիւ թէ ձեռքէն սըրճին աման թողած,
 Ի քուն անուշ մըտաւ, գետնի վերայ սըփռած,
 Եւ նընջէր և խորդայր, և տեսանէր երազ,
 Տեսիլ անճառելի, գերահրաշ և անհաս
 Երկրաւոր մարմնեղէն և հողեղէն մըտաց . . .
 Սաւառնացեալ թեւօք թըռչէր արագընթաց
 Ընդ մէջ յաւիտենից, հըրեշտակ հըրեղէն
 Եւ յաննիւթ արարած փոխուած յանկարծօրէն,
 Իշխան միահեծան ծովու և ցամաքի,
 Որք փոխէին զերեսս ըստ նորուն ակնարկի,
 Ցամաք մըռընչելով յալեաց սալայատակ,
 Եւ ծով դըղըրդելով դոփմամբ սալասըմբակ :

Ոչ գիշեր, ոչ լոյս էր, ոչ միջոց և ոչ ժամ,
 եւ նոյնքան հաշուէր անդ մանրերկրորդ մի և ամբ
 ջէր ինչ անհրնարին, և ոչ մի ինչ բաղձանք
 Որոյ լըրումբն չէր 'ի քըթթել անդ ական
 ֆանի ժամ չըգիտեմ և կամ քանի տարի
 Ապրեցաւ այսօրին կենօք Անդլիացի,
 Հեռի 'ի Լոնտոնի տաղտուկ ձանձրութենէ,
 Միգամած գոլորշւոյ, շոգւոյն թանձրութենէ,
 Անտվոր երկնահրաշ հաճոյից մէջ թաղուած,
 եւ անճառ դոհութեան, խելքէ մըտքէ չանցած,
 Յարածամ անյագուրդ, լիուլի յագեցեալ . . . —
 երբ զարթեալ 'ի քընոյ, երեկոյ էր հասեալ . . .
 Անդլիացին դեղէն հաղար ոսկւոյ գընեց .
 կըլլեց ու քընացաւ, զարթեալ, նորէն քընեց,
 եւ այս հատիկներուն մէջ, զանգեալ խաշխաշով,
 եգիտ զերանութիւն հանապազօր քընով:
 կատարեալ Նիւե+ի, թըմրած մէջ ապշութեան,
 Մոռացաւ զաշխարհի ձանձրոյթըն զամենայն:
 Լիտըրներով տարաւ այս դեղէն 'ի Լոնտոն,
 Բաշխեց բարեկամաց և շատ տարածեց հոն .
 Այնպէս որ բընաջինջ առնելու օր քան զօր
 Ըսպառնան այս հատիկք զախտն ըֆլմ մեծազօր:
 Իսկ մեծատունն երկար և անխոյթ ապրեցաւ,
 Մանաւանդ թէ բոլոր իւր կեանքըն քընացաւ:
 Միայն սովոր էր նա ըսել թէ Արթնութիւն
 Ծընած էր յաշխարհի ամէն գըթբաղդութիւն,
 Թէ հեռի 'ի հոգոց, բարձին վըրայ 'ի քուն
 Խընդրելի էր միայն անքոյթ երանութիւն:

ԱՆԿ ԼՈՒՍՆՈՅ

Ազգ մի զարմանալի է աշխարհիս վերայ ,
 Որ զեռնոյ պէս զազիր յերեսս երկրի եռայ ,
 Որ գոռայ ամպոց պէս , սողայ նրման օձու ,
 Պատուելի 'ի մակդիր կոչի և տիրացու .
 Յաթոռս բարձերէց նըստի նա վարժապետ . —
 Սա է գիտնոցըն դաս , յորմէ չէ ինչ տըգէտ .
 — Այս ի՞նչ հակասութիւն , — լըսեմ եթէ դոչեն :
 — Այո՛ , հակասութիւն . աղէ , ի՞նչ զարմանք են .
 Ո՞ր է այն յաշխարհի որ չէ հակասական ,
 Ո՞ր մարդ կամ կենդանի ընդ որ չը զարմանան ,
 Որ հակառակ տենչանք և կըրքեր չ'ունենայ ,
 Որ թըզուկ , 'ի բարձունս հասանել չը ցանկայ ,
 Որ թաց գետնին վըրայ կըծկած հեք չըքաւոր ,
 Չըկարծէ օր մ'ըլլալ աշխարհի թագաւոր :
 Սապէս և որ կոչին աշխարհի մէջ գիտուն
 Յաճախ է բըթամիտ ինքնակոչ իմաստուն :
 Յաճախ Արիստոտել և Սոկրատէս տըխմար ,
 Եւ քան զիմաստունն է իմաստնադոյն խիկար ,

Որ ոչ բարձրէն թըռչի, վերանայ մէջ ամպոց,
 Ի բան կարկընաչափ քուն ածէ զըւարթնոց,
 Ի գըրոց 'ի գըրուած, յօրադրէ յօրագիր,
 Իմաստս հալածական ածէ մեզ և թըմբիր:
 Ազգըս այս օր աւուր ածի և զարդանայ,
 Եւ զաշխարհի երես ծածկելու ըսպառնայ,
 Իբրու տարափոխիկ ախտ մի վարակի հոծ.
 Տակաւ իմաստութիւն լըցուսցէ ըզփողոց,
 Եւ զարեւ յարեւելքս խաւարեցուսցէ,
 Եւ տեսցեն յարեւմուտքս թէ օրէն իցէ:

Ինչպէս կը տեսնէին օր մի որ ժողովեալ,
 Ըզլուսին և զարեւ էին հարցափորձեալ,
 Մինչդեռ յիմաստնոց աստղըն զերես իւր ծածկէր:
 Յետոյ երկրագունտիս վըրայ բերին աչքեր,
 Ճառ մի տարերց վըրայ խօսեցան և այլ ճառ.
 Բուսոց և կենդանեաց և 'ի մարդոյ կաճառ.
 Յետոյ 'ի պատմութիւն իմաստասիրաբար,
 Յետոյ բաղմադիմի խօսք և բիւր գաղափար,
 Որոց իւրաքանչիւր մի մի հակասութիւն
 Եւ ինքնահաճ մըտաց էին թիւր տըքնութիւն:
 Ծեր ոմն 'ի նոցանէ որ մընայր անհամբեր
 Ունկընդրաց լըսելի լինելոյ, յոր ճըգնէր,
 Յօտըն կաց, ըզբարբառ թախանձելով ինքեան,
 Որոյ 'ի տես ալեաց լըռեց հանդիսական:
 Կունտ էր նորա գըլուխ և աչք խոր և տարտամ,
 Եղեսական անդրոյն պէս 'ի ձեռն էր դըրամ:

—Սա է, ասէ, Աբգար և որդի Աբգարաւ,
 Որդի միւս Աբգարու, կեցեալ յերկրորդ դարու,
 Իշխան եղեւիոյ, քաղաք Միջագետաց,
 Դրրամ ցայսօր անգիւտ և զոր իմ է գլտած,
 Որոյ տարեգրութիւն լուծէ զանլոյժ խնդիր
 Եւ ջրէ ըզկարծիս Փրկչին գոլ ժամադիր:
 Այլ և է սահմանեալ 'ի ձրգել լոյս պայծառ
 Ի շատ բան պատմութեան, արկեալ ցարդ 'ի խաւար.
 Զոր աւելորդ ճառելն է մի ըստ միովէ,
 Զոր 'ի գիր թանձր, տեարք, արձանագրեմ, գոչէ:
 Եւ ըզժամրս բազումս անձանձիր և անյագ
 Հընագէտ ծերունին խօսէր զայս օրինակ,
 Առանց ուշ ունելոյ անուշադիր մարդկան,
 Որ նընջէր և խորդայր 'ի թըմբիր տաղտկութեան,
 Մինչդեռ ճարտասանին 'ի ծագաց մինչ 'ի ծագ
 Վանէր Միջագետաց ըզնա, պէս զըւարակ,
 Եւ տակաւին շատ ինչ 'ի խելամըտութիւն
 Ունէր ասել թէ ոչ ընդմիջէր ձայն նորուն . . .

Յանկարծ, ո՞վ հըրաշիցն անճառելի 'ի բան . .
 Զայն բարբառոյ հընչեաց 'ի խորոց բարձրաձայն,
 Շարժեցաւ 'ի տեղւոյն ուր էր եղեալ դրրամ,
 Եւ լըռեաց ահաբեկ իմաստնոցըն երամ.

—Յիմարք և կոյրք, ասէ, որ 'ի ծով անսահման
 Իբրու քաջ նաւուղիդ կարծէք նաւել ուսման,
 Եւ գիտէք ոչ շարի արկանել զայբն առ քէ,
 Իբրու մանուկ մի խակ որ հաղիւ թէ հեգէ.

Ի խորոց անդընդոց և յարդանդէ երկրի
 վերանայք 'ի բարձունս ատիճանաց երկնի .
 Ոմն 'ի ձէնջ ըզգունատէն յոր դընիք խօսեցաւ ,
 Այլ ոմն ըզմետաղաց զոր ծածկէ նորին խաւ ,
 Այլ ոմն ըզկենդանեաց և ըզբուսոց երկրի ,
 Եւ ոմն ըզմարդկանէ որ սյդրէն բընակի ,
 Յետոյ ոմն ըզմարդոց որք անցին վէպս ասաց ,
 Եւ 'ի վըկայութիւն եդ զիս ոմն ըստ դիպաց :
 Իսկ արդ ես , որ վըկայս եմ այդ ամենեցուն ,
 Ասեմ եթէ տըգէտք էք գըլխովին դոցուն .
 Ոչ զերկին և զերկիր և ոչ զոր անդ գիտէք ,
 Եւ թիւր է ամենայն որ զանցելոյն դատէք .
 Ո՞ր 'ի ձէնջ թափանցել կարէ զայն խոր խաւար ,
 Երբ չըգիտէ ճըճին զոր կոխէ գարշապար :

Եւի ես 'ի ծոցոյ հողոյն , 'ի բովս հանքի ,
 Յառաջ քան ըզլինելըն դըրամ , եմ ոսկի .
 Ոսկին չ'է ինքնուրոյն , ինչպէս կարծէք , զանդուած ,
 Այլ է բաղադրութիւն զանազան մետաղաց ,
 Յորոց 'ի ծոց երկրի դարուց 'ի դար զըտեալ ,
 Դոյանայ նախագոյն քան ըզզըտելդ 'ի հալ :
 Դըրամ , չեմ ես Աբգար կեցեալ յերկրորդ դարուն ,
 Այլ տարեգիր միայն դըրոշմեալ 'ի նորուն .
 Եւ ոչ Աբգարն անուն է որդի 'ի հօրէ ,
 Այլ թարգմանի իշխան , արքայ կամ մարդարէ :
 Առաջին եմ Աբգար տիրեալ Միջագետաց ,
 Յառաջագոյն ամօք քան ձեր թըւականաց ,

Յորոց շատ նախագոյն էր ըստեղծեալ աշխարհ ,
 Որոյ մշտացածին ճըշդէք թըւահամար :
 Ալիք պատկառելի տիոցրս են վրկայ ,
 Թէ շատ ինչ եմ տեսեր որ գըրոց մէջ չըկայ .
 Տեսի ըղնահապետն ես հանուրց մարդկութեան ,
 Տեսի զաշխարհակալս , զորդիս իմաստութեան ,
 Տեսի ըղՄոկրատէս , ըղմեծն Աղեքսանդրոս ,
 ԸղՄովսէս մարգարէ , ըղքերթողն Հովերոս ,
 ԸղՓարաւոնս , որք են արքայք Եղիպտացի ,
 Եւ ըղմիւսըն Մովսէս կոչեալ խորենացի .
 Տեսի ես ըղպաշտօն ըղդից Որմիւղական ,
 Տեսի ըղխանձարուրըս քրքիստոնական .
 Հովեր զոր տեսի ես , չ'է զոր կոչէք Հովեր .
 Այլ ճըշդըրտիւ յեղումն է 'ի բառէն Քիճէ :
 Մոկրատէս իմաստուն չեկաց , այլ վառասէր :
 Որ ըղհանձար այլոյ ինքն ինքեան ըստանձնէր .
 Աղեքսանդրոսք բազում կացին , զորոց նախնիր
 Միայնոյ ընծայէք , Մակեդոնացւոյն ժիր :
 Են են շատ սինլըքորք և տըխմարք , սոփեստեա
 Առ 'ի ձէնջ առձայնեալ և զոր ոչ ոք ետես :
 Են այլք , որոց ոչ դոն հետք մի և յիշատակ ,
 Զորոց ածիւն հողմոց հետ ցընդեց ժամանակ :
 Շատ արկածից հաղորդ եղէ և շատ գործոց ,
 Պէսպէս սակարկութեանց մէջ մըտի ես մարդոց .
 Եղէ ես շատ դիպաց և խորհրդոց ողի .
 Զեռն 'ի ձեռն անհամար անցեալ իբրու գործի :
 Ի դանձ արքունական պահեց զիս թագաւոր :

Կաշառակուրծ ձեռաց մէջ էառ դատաւոր :
 Յաճախ եմ զարդարած կանացի պարանոց ,
 Եւ գիտեմ 'ի մօտոյ զուշ նոցին խորհրդոց :
 Ամեն աչք և տենչանք անդուլ զիս ցանկացան ,
 Շատ արկածից պատճառք եղէ ես իսկական ,
 Շատ մարդասէր մըտաց ըսքօղեալ նըպատակ ,
 Շատ փառաւոր բանից մէջ թագուն խըրտուիլակ :
 Թափառեալ յար նըման Հըրէին անդադար ,
 Էջք են յիս պատմութեան անլուր դարուց 'ի դար :
 Յետին զիս ըստացող էր գիտուն Գերմանիկ ,
 Հընադէտ և յերկինս ուղորդ յօդապարիկ ,
 Որ ոսկի շըղթայիւ պարանոցէն կախեալ ,
 Յերկրէ մինչեւ յերկին տանէր զիս վերացեալ .
 Յոյց ինձ ըզտիեզերս ընդ ոտիւք 'ի խոնարհ ,
 Զերթ փորձիչն 'ի բարձանց աշտարակին զաշխարհ :
 Օր մի գունտն ոգելից հիւթովն անօտրացեալ ,
 Թըռուցիկ տար ըզմեզ, զերթ սըլաք սըլացեալ .
 Տարաւ և մերձեցոյց 'ի ծագըս երկնային ,
 Ուր ոչ ոք մինչ ցայն վայր ելնել յանդըղնէին . . .
 Եթերական փայտին սամիք ուղչաց խըղէր ,
 Վայրիկ մի յետոյ գունտն օդապարիկ ճայթէր ,
 Եւ գետնաքարշ ձըգմամբ 'ի ծով և 'ի ծանծաղ
 Թաւալագլոր, փըշրէր իբր ըզնուրբ շամանդաղ :

Բայց , ո՞վ ըսքանչելիք , երեւեցաւ լոյս մեծ ,
 Եւ ճառադայթն ըզմեզ իբր 'ի պարանքարչեց ,
 Քարչեց և 'ի պայծառ տարաւ վայր հաստատուն :

Երկիր անճառելի, լուսնոյ աստեղատուն :
 Այո՛, տեարք, ըզլուսին տեսի որպէս ըզձեզ
 Տեսանեմ, ըզլուսին և որ շուրջ են զաստեղս,
 Ըզլուսին ոչ ըզձեր տեսեալ 'ի դիտակի,
 Լերամբ և կենդանեօք, ձրկամբ 'ի գետակի,
 Մարդկամբ յար և նրման մարդկան որ յաշխարհի.
 Ոչ, այլ լուսին դըրախտ մարդկան ոգեղինի,
 Որ ոչ ձեւ մարդկեղէն ունի և ոչ տեսիլ,
 Ոչ կարճամիտ մըտօք է նորա նրմանիլ.
 Ոչ հիւժական ախտից մէջ տողորի մաշեալ,
 Ոչ պէտս հարկեցուցիչ տաժէ ծովածաւալ.
 Եւ ոչ է նա գերի կըրից անյագելի.
 Վըկայ ես իսկ բանիցըս եմ անժըխտելի :
 Զիմաստնոյն ոգեապառ 'ի վերափոխմանէն
 Մերկացուցին դիակն անկենդան հանդերձէն.
 Տեսեալ զոսկի շըզթայն յորմէ կախէի ես,
 Հանին և հայեցան ժըպտելով յիմ երես...
 Յետոյ քամահելով արկին զիս ընդ այեր...
 Զըգիտեմ ցորչափ ամա եդի 'ի վայր և վեր,
 Մինչեւ հասի յերկիր ուստի էի թռուցեալ,
 Ուր ձեռն հողադործի ընկալաւ զիս դարձեալ,
 Յորմէ շատխօսութիւնդ ամ առջեւ ժողովոյ,
 Խորհըրդոց անմըտաց ունկընդիր լինելոյ,
 Յորմէ յետոյ դ եւ ուր մընայ ինձ հասանել,
 Եւ տակաւին ի՞նչ կայ, չըգիտեմ, տեսանել...

ԽՈՐԹ ԽՈՐՈՑ

Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն .
 Եւ հանգեաւ վաստակեալ ծով 'ի խաղաղութեան ,
 Անվերդով և պայծառ իբրեւ 'ի հայերւոջ ,
 Եւ սաստ մըրըրկածուի հողմոյն ահեղագոյ
 Մընջեց իբրեւ ըզգառն անմեղ և կամ ըզհաւ
 Իթըխսոյ թըռուցեալ ըզհետ ձագուցն , և նաւ . . .

Ոչ նաւ , ոչ նաւուղիղ և ոչ իսկ նաւաստի ,
 Ոչ կայմըն և ոչ զեակ , ոչ ձորձ առագաստի ,
 Ոչ ցամի , ոչ պարան , ոչ խարիսխ , ոչ մակոյկ ,
 Ոչ խելք և ոչ գող , ոչ հետք մի կամ բեկորք ,
 Եւ կամ նըշխարք զերծեալք նաւակոծութենէն ,
 Եւ ոչ մի ինչ մընայր յողջոյն ողնափայտէն :

Հապա եթէ ոչ ինչ կայ 'ի լաստէ անտի ,
 Առ ի՞նչ , ասասցեն մեզ այդ խօսք վարկպարադի ,
 Եւ այդ յառաջաբան անջըրդի և ցամաք
 Ո՞ր տանի եթէ ոչ 'ի վերջաբան փանաք .

Եւ ի՞նչ մընայ առնել մեզէն այսուհետեւ ,
 Թէ ոչ փակել ըզգիրս և նընջել ըստորեւ :

Ի՞նչ անուն այս նաւին և նաւակոծելոյ .
 Գուցէ ըստ սոցանէ ըսկըսանել էր գործ ,
 Եւ աւարտել անդրէն ուստի ըսկիզբն առի ,
 Ուր ծով ալէկոծեալ հեղձու ըզնաւաստի ,
 Եւ ըզնաւ և նաւորդ , և մընայ իրր այրի ,
 Ծով անհուճ և ծանծաղ , ուր չէ շունչ կենդանի

Բայց 'ի ձըկանց 'իւրղ ընթացեալ ընդ ալեօք ,
 Ընդ որրս կամ զորոց ճառել չէ ինչ մեզ հոգ ,
 Քանզի անձնիւր գըրոյ է որիչ նըպատակ .
 Եւ թէ իւրաքանչիւր իմաստնոյն օրինակ
 Խորհէր կամ թէ խօսէր և կամ եթէ գըրէր ,
 Այնուհետեւ անպէտ ամենայն գըրեան էր :

Գուցէ չիք ինչ անպէտ քան ըզգիրըս համբուն .
 Գէթ այս առհասարակ կարծիք է շատերուն ,
 Որք կ'ըսեն թէ չ'առնել հացավաճառը զան .
 Եւ որք մատենագրի շաղակրատ անուն տան ,
 Թէ նա յամպըս ելնէ գերբընականօրէն ,
 Թէ յածի ընդ երկիր լոկ իբրեւ մարմնեղէն ,

Թէ ուղեմայ գըրոց բարբառով, զերթ ազուա ,
 Փետրովք սիրամարգին սիգալ դըրախտահաւ ,
 Կամ թէ իջեալ յըստօրըս աշխարհաբարին ,

Տանջել ըղլրսելիս ոճով մըտացածին,
 Օտարոտի լեզուաւ և անշընորհ շէնքով,
 Գրուեհիկ, ռամկական և թիւր շարագրածով:

Ասմ' իմաստակորէն դիզել միըզմիով
 Անլուր հակասութիւն վերայ հակասութեան,
 Զրկանց թըռիչ առնուլ, թըռչնոց լողալ 'ի ծով,
 Կամ թէ, ըստ Որատեայ ճարտար ակնարկութեան,
 Ըզձիոյ պարանոց ձուլել 'ի մարդկեղէն
 Պատկեր, և յաւելուլ 'ի նա ձեռն օձեղէն:

Գուցէ ըսեն մեզի թէ սա է ճիշդ պատկեր
 Մեր ոճոյ գըրութեան, և թէ 'ի գըծել մեր
 Զայլոյ նըկարագիր, ինքնովին նըշաւակ
 Սուներմք ճըշգըրտաբար զանձըն մեր փոխանակ:—
 Ոչինչ իրաւացի քան զայս ճըշմարտութիւն.
 Միայն քանի մի խօսք են 'ի դիտողութիւն.

Յիրաւի ոչինչ մեզ է յոյժ անտանելի
 Քան թէ ճըկիլ կամաւ յօրէնս անխըղելի,
 Ի չափ և 'ի սահման զորովք չէ անցանել,
 Որոց է մեզ յաճախ ապըստամբ գըտանել,
 Լաւ համարեալ շըրջիլ ոտիւք ըստօրերկեայ
 Քան թէ շինծու թեւովք թըռչել երկնից վերայ:

Դարձեալ, նըման մեզուին, խոյզ և խընդիր եղեալ,
 Վարդին հետ կը ծըծեմք ամեն ծաղկի հիւթն այլ:

ի գլխոյ բարբառոյ առնումք ըզպարզեւս իւր,
 եւ 'ի ռամկականէն չըխըղճեմք զոր անձնիւր
 ընծայէ, և զամէնն 'ի մի ձուլեալ խըմոր,
 Զանամք պատշաճելոյ պիտոյից նորանոր:

Գուցէ պարսաւեն մեղ շատ ինչ պակասութիւն,
 Մանաւանդ թէ այսրէն իսկ ըզշատխօսութիւն...
 Վասնորոյ աւանիկ կարճառօտեմ ըզբան.
 Մինչեւ հեծեալ 'ի նաւ էր ոմն սոսկական,
 Գիրկս ածեալ ըզնովաւ կին նորա լալագին,
 Երդուաւ մինչեւ ցըմահ մընալ հաւատարիմ:

Մինչեւ 'ի մահ, բարէ. ոչ ապաքէն է շատ.
 Մինչեւ 'ի մահ որո՞ւ և կամ ինչի՞ համար.
 Ի՞նչ կայ մինչեւ ցըմահ հաստատուն յայս աշխարհ,
 եւ կին որ խոստանայ կամ երդնու անուրաստ
 կալ մընալ հաստատուն 'ի խոստմանըն իւրում,
 Երանի՞ թէ նա տայր հազարին մէկ լըրումն...

Նա՛ երանի՞ կընոջ որ չըսըտէ իմիք.
 Բիւր երանի առն այն որ եղիտ զայս փիւնիկ,
 Որ գիտաց 'ի բովուց հանել ըզզուտ ոսկին,
 Որ 'ի սըտութենէ քաղեց ճըշմարտութիւն.
 եւ այս սեռին գեղոյ և շընորհաց վերայ
 Յաւել առ 'ի սըսակ ձիւք մի այլ գերակայ:

Պիտի ըսեն մեզի եթէ զըրպարտութիւն
 է մեր ըրածն ու փուն գատարկապարտութիւն
 Գուցէ և փոխադարձ և ոչ յանիրաւի ,
 Պիտի ըսեն կանայք զոր ինչ և աւելի
 Նոցա համար ըսինք , և թէ բաց յայնցանէ,
 Շատ աւելի ախտեր էրիկ մարդ կը տածէ՞

Եւ իրաւունք ունին . ո՞չ ասլաքէն կինն է
 Որ ինչ մարդըն շինէ ըզնա և յարդարէ ,
 Ի՞նչ կըրնանք պարսաւել 'ի նա զոր չունենանք,
 Եւ այս սեռ, որ ճըշդիւ է զըրկեալ հըրեշտակ ,
 Յաճախ քան զէրիկ մարդն է յոյժ առաքինի .
 Գէթ ոչ զառածէ նա, թէ և շատ իսկ խօսի :

Ինչպէս կը խօսիմք մեք և կամ թէ կակաղեմք,
 Մանաւանդ թէ կարծեմ թէ զարթուն երազեմք,
 Որ նաւակոծութենէ մեր խօսքըն ըսկըսեալ ,
 Յետ ընդ ծով և ցամաք զընթերցողըս ածեալ ,
 Ի վարդապետութիւն արդ խարիսխ արկանեմք,
 Նըպատակ յոր մեք ոչ յիրաւի, թեկն ածեմք ,

Տեսակ մի գըրութիւն, ընդ որ հաճիմք իսկ ոչ
 Թէպէտ մեր զըրածն այլ ոչ քիթ ունի ոչ պոչ .
 Յորում ամենայն ինչ խառն 'ի խուռըն խըրկի,
 Ուր ոչ ըսկիղբն է ոչ վախճան կատարածի ,
 Ուր այր և կին մէկտեղ անխըտիր և անճահ . . .
 Կարծեմ դարձեալ զըրչիս տակն է խօսք մի անշահ :

Ո՛վ ճակատագրին հրաշից անճառելի,
 Ի պահուն յորում նաւ խորասուզէր՝, կէտ մի
 կուլ ետ զամուսինն այն որոյ երդուած էր կին,
 Եւ, ըստ սովորութեան այս ուշիմ վիշապին,
 Տարեալ փրսխեց ըզնա յերկրին Մատակասքար,
 Զերթ ըզՅովնան ամբողջ և կամ սուտ խելագար:

Ափռնք Ափրիկիոյ սիրասունք 'ի վաղուց
 Հինից յերուզակաց եղեն և են ցայսօր,
 Վաճառաշահք 'ի տուր և առքս գերելոց,
 Զորքս գընեն այդրէն և վաճառեն այլուր.
 Յընչաց քերեալ ըզլուրջ ֆրրանկ նաւատորմաւ,
 Որ յակճիւքս կայ անդ առ որսալ ըզհարաւ:

Սարիմ, զի այս անուն էր ձրկան փրսխածին
 Եւ կանխաւ իւր կընոջ հետ գըրկախառնածին,
 Տարեալ յերկրէ յերկիր 'ի գերեվաճառաց,
 Իւր միակ ապաւէն յիշատակն անմուաց
 Էր կողակցին, որպէս զի թէ օր մի փըրկէր,
 Յայնժամ 'ի գիրկնորա վըստահութեամբ դիմէր:

Այս պանդըխտութեան մէջ նորա մօրթն երեսաց
 Խանձեալ էր և խամրեալ ընդ դօտւոյն այրեցած,
 Զի ընդ մակերեւոյթ ծովուն ծայրէ 'ի ծայր
 Նաւարկեց նա անդուլ և անխոնջ նաւավար,
 Հուսկ ուրեմն յափունս Եդիպատոսի տարեալ
 Վաճառեցին ըզնա առ կին մի մեծափառ:

Էր պաշտատ այս բամբռչին և հոյակապ ոստան
Առ եղերբ Նեղոսի, զոր պատէր բուրաստան
Բիւր քաղցրաբոյր ծաղկանց, և ծառոց հովանի
Ոստագեղ զովասփիւռ, հեշտին ամարանի,
Դրրախտ ըսքանչելի, ուր անդիւտն 'ի կանանց
Բաղմէր բարձր 'ի գլխու թագուհի գերապանծ:

Ի՞նչ աղգէ էր գլխոյն, ըստուգիւ չ'ենք գիտեր,
Զորոյ պատմութիւնը լռութեամբ է անցեր.
Հայ էր, Յոյն թէ Արաբ, կամ թէ Եւրոպացի,
Կամ Անտաղուսիոյ բլնիկ քաղաքացի.
Կամ պա՞ղ կըլիմայի արիւն ընդ հըրաշէկ
Խառն յերակունս հոսէր նորա կապուտաներկ:

Էր անուն գլխոյն գեղապանծի Գոհար,
Որ փայլէր առաւել քան ըզփայլուն գոհար.
Գոհար և աղամանդ և ալըն պատուական,
Գինդ և մանեակ և օղ 'ւ ոսկի ապարանջան,
Շողշողեալ 'ի բազուկըս նորա և մարմին,
Էին շատ ըստորեւ քան ըզփայլած սորին:

Մարմին ոչ 'ի մարմնոյ հաստեալ, այլ կըճակերտ,
Ի փըրփրոյ և յասուէ զանդ եալ, մէջք փետրակերպ,
Եւ հասակ գեղաղէշ քան զուռենւոյ, սիրուն,
Եւ յօնք աղեղնակերպ և աչկունք ըզմայլուն,
Հերք գլխոյն ոսկեթել վերտ վերտ ոսկեճամուկ,
Եւ բերան մատնոցեայ և փափկասուն մատունք:

Նաժիշտք և աղախնայք էին նորա հաղար ,
 Եւ հաղար բիւր գերի , պատանի անհամար ,
 Ոչ թէ Եթովպացի կամ սեւամորթ խափշիկ ,
 Այլ ըսպիտակագէմ և տեսլեամբ գեղեցիկ .
 Սեւ աչուի սեւայօն , խարտեաչ կամ սեւահեր ,
 Եւ շատ հասակագեղ մանուկ մատրուակներ ,

Զորըս գընէր յաճախ թագուհին թանկագնոյ ,
 Եւ ապա արձակէր այս վեհանձըն դըշխոյ ,
 Որ յագենայր տակաւ , թէպէտ միշտ անյագուրդ ,
 Որոյ միահեծան ոչ այլ էր թագաւոր
 Բայց ցանկութիւնք սըրաին , որք յորդէին զեղուն
 Եւ որոց ոչ ուրեք էր երբեք յագեցումն :

Քանզի սիրէր նա ճիշդ որպէս Մեծադինէ ,
 Կամ կըլէոպատրա և կամ կատարինէ ,
 Երեքեան թագուհիք ճակաճան տըռփանաց ,
 Յորոց ոչ տարբերէր ինչ բոց հըրոյն անանց ,
 Որ վառէր 'ի սըրաին անըսպառ անարգել ,
 Եւ զոր չըկարէր ինչ մեղմել և կամ մարել :

Ի՞նչ էր նիւթն այս բոցոյ կամ ի՞նչ խընդրէր անյագ .
 Ըզգե՞ղ Ադոնիսեայ թէ զՈրփէի դաշնակ .
 Զիմաստս Աթենասայ թէ զՃիրս Անահտական ,
 Պայրընի կամ կէթի հանճարն անհատական ,
 Ըզգըրկա՞նըս պագշոտ ջերաջերմ եռանդեան ,
 Թէ համբուրից սիրոյ յորդութիւն անվախճան :

Ամենայն մարդիկ նոյն քիթն ունին և նոյն մորթ,
 նոյն մարմին և անդամք, նոյն մազնաւ և նոյն բուրդ.
 Ոչ ապաքէն մէկ պորտ պաշտէ ամեն մարմին,
 եւ այր իւրաքանչիւր նրման է ընկերին.
 Իսկ արդ ի՞նչ են պատճառք և ի՞նչ է յատկութիւն
 Որ գերադասա առնէ ըզմին քան ըզմիւսոյն:

Ափսոս հակասութեան մարդկայինրս սրբտի.
 Ոչ գեղ երեսաց են տենչանք սիրահարի,
 Ոչ ժըրաժիր մարմնոյ վայելըս անհատնում,
 Ոչ հոգւոյն անձկայրեաց գըրգանըս անպատում,
 Ոչ վարդն և ոչ վարդին ըզմայլուն հոտ անուշ.
 Այլ զոր սիրեմք ՚ի վարդն է յաճախ նորին փուշ:

Զի ախտ մի ահարկու խայթիչ և անդարման
 Անդադար կըրծեալ կեղէ ըզսիրտ մարդկան.
 Չանձրոյթ, գիշերադէմ մաղձ մըթին միդամած,
 Որ պատեալ պաշարէ ըզհոգի մահացուաց,
 Որով բռնաբարեալ և նեղեալ ՚ի սրտէ,
 Փոխէ յօժարութիւնքն և անդուլ փոփոխէ:

Ինչո՞ւ այսօր է վատ որ երէկն էր բարի,
 Ինչո՞ւ ատեմք այգուն զոր սիրեմք գիշերի,
 Ի՞նչ են այս եռանդուն տենչանք և անձկութիւն,
 Եւ վերադարձ փութով և վաղ տըժդոհութիւն.
 Ի նրմին սլահու սէր և անհաշտ դըժտութիւն,
 Եւ բիւր հակասական անյադ յօժարութիւն:

Զանձրոյթ, և անձանձիր բաղձանք փոփոխութեան,
 Զանձրոյթ, որ ատելի ընծայէ զամենայն .
 Զանձրոյթ, ցեց ուտիճ և վիշապ վիթխարի
 Քան ըզՊըրոմեթեայ անգեղ լերդակերի . . .
 Զանձիր . . . Բայց ո՞ւր թողաք ըզԳոհար տաղտկադին
 Եւ ըզՍարիմ, որ զիւր իսկ ծանեաւ 'ի նա կին :

Խընդիր մի Դըշխոյին էր յոյժ զարմանալի ,
 Առեղծուած անեղծ և անլուծանելի ,
 Որ տագնապէր ըզնա տըւէ և գիշերի ,
 Զոր նա առաջարկէր առ ամենայն դերի .
 Եւ երբ սա վարանեալ չըտար պատասխանի
 Հարցուածոյն , արձակէր յայնժամ ըզպատանի :

Ոչ ոք էր բաւական լուծումըն տալ խընդրոյն ,
 Զորոյ և ըզՍարիմ հարցափորձեց դըշխոյն .
 Քանզի խորհուրդ մըթին ծածկէր ընդ այս բանիւ
 Թէ «Քանի՞օն ծովու խորութիւն է լըրիւ» :
 Իսկ ո՞ կարէ չափել զոր ձեռն անմահական
 Կանգնով կամ թըզաւ ոչ հաստեց անհատական :

Ասէ ցընա Սարիմ . Խորք ծովու ունին կէտ
 Մինչ 'ի կայս վիշապին , ուր դընի ձուկըն կէտ ,
 Որոյ յորովայնի իջի ես անդանօր ,
 Ուստի փըսխեց դարձեալ զիս յափըն երկրաւոր .
 Խորոց Ովկիանու սահմանք անհուն են ոչ .
 Բայց քանի՞օն սըրտի խորութիւն է կընօջ :

Գոհար ծանեալ 'ի բանս այսոսիկ ըզմարիմ',
 Զամուսին զոր սիրէր սնդրը քան ըզչիրիմ',
 Ըզմարիմ, ոյր գլրկեաց և եթաց արտասուօք
 Զոտըս և ըզձեռինըս բիւր հեծեծանօք.
 Իսկ սա հրրաժարեալ 'ի յողջագուրանաց,
 Մեկնեցաւ 'ի գլրկաց նորին և հեռի կաց:

Ո՛վ իմ սրբաբն հատոր, աղաղակեց Գոհար,
 Ո՞ կարէ պատմել քեզ ըզսուգ և ըզխաւար
 Խորոց սրբաբն յօրէ յորմէ կամ յուսահատ,
 Ըզքեզ լալով, ըզքեզ, զոր 'ի ձոր և 'ի դաշտ,
 Ի ծով և 'ի ցամաք և 'ի գիրկըս անձնիւր
 Աղատի կամ գերւոյ խընդրեցի ես 'ի զուր:

Սարիմ սասանեցաւ և գընաց մեկնեցաւ
 Հեծեալ 'ի նաւակ մի, և այլ մէկ չըդարձաւ.
 Եւ այլ ըզխորուծիւն չ'եհարց կընոջ սրբաբն,
 Խորխորատ անատակ, վիհ անմատոյց և լի
 Ի բիւր հակասութեանց հողմահար հեղանիւթ,
 Զոր ծածկէ յեղյեղուկ շարժուն մակերեւոյթ:

Իսկ Գոհար ի՞նչ եղեւ և ո՞ւր մընաց արդեօք,
 Ըզծովու խորուծիւն չափելու տարաւ հոգ
 Շարունակ, թէ այս փորձն ըզնա տարաւ անդարձ
 Ի խորըս ուստի չիք ինչ հընար փրկանաց.
 Պատմութիւնըն ցայս վայր հասանէ և լըռէ,
 Եւ պատմութիւնըն կարճ կապել խիստ լաւ առնէ:

Նախ զի չէ պատմութիւն որ անթերի ճառէ ,
 երկրորդ , եթէ զամէնն ուզենամք երկրորդել ,
 կարծեմ եթէ ծովու խորութիւն չըբաւէ
 Ըզգործըս և զարարըս կանացիս տանել .
 Եւ երրորդ , յայսմանէ թէ ինչ բարոյութիւն ,
 Թողումք ընթերցողաց 'ի խելամըտութիւն :

ԾԱՂԿՈՑՔ ԿԵՆԱՅ

ԱՅԼԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Դեռահաս մանուկ տըղայ
Յայդի պըտղալից մըտաւ .
Երկիրն ամեն շըրջակայ
Լի բարեօք բիւրովք տեսաւ .
Տեսաւ ծառերն 'ի միրդ լից ,
Որթերն յողկոյղ հողամած ,
Պարտէզն 'ի հոտ անուշից ,
Եւ բուրաստանք վարդենեաց .
Եւ այլ մէկ բան չըտեսաւ .
Միտքն ըզմայլած 'ի գեղէն ,
Քիմքն հիացեալ 'ի հոտէն ,
Ի հովանի անդ նըստաւ :
Յանկարծ լըսեց երգ անուշ
Ոստոց մէջէն մերձակայ
Զայն բարբառոյ շատ քընքուշ

Սոխակին , վարդն այլ նրմա .
 վարդըն կ'ըսէր . — Ո՛վ հիւրիկ ,
 Ի՞նչ ես եկեր հոս ուզել ,
 Պըտո՞ւղ , բանջա՞ր թէ ծաղիկ ,
 Թէ հովանի ծառոց ծեր :
 Հոս դեղձին կը ծանրանայ
 Ոստովք իւր շէկ բեռին տակ .
 Հոս խընձորն ոսկի գընտակ
 Տանձին դէմ առ դէմ խայտայ :
 Հոս այգին է լի որթովք ,
 Որթերն այլ յոյր ողկուղովք ,
 Ողկոյզքն այլ սադի նրման
 Փայլեն դեղնորակ դունովք :
 Սոխակն աչքերըն խըփէ ,
 Լուռ մունջ մընայ այս խօսքին .
 Ետեւ պատասխան նրմին .
 — Չեմ ուզեր յայս ամենէ :
 — Հապա ի՞նչ , կըրկնեց վարդն այլ ,
 Բուրաստանն է լի ծաղկամբ ,
 Յասմիկ կաթնորակ փայլ փայլ
 Ծաղէ աստղունք ըստեղամբք :
 Մեխակն է ինձ նախանձորդ ,
 Եւ մանիշակն 'ի հօրուտ
 Շուշանըն շողէ վառ վառ ,
 Որ մէկէն կ'ուզես դու ան :

Սոխակն այլուի ողբաձայն
 — Չեմ ուզեր այս ամէն բան ,
 խօսեց , ժըմտեց ու թըռաւ ,
 վարդին վերայ եկ ինչաւ :
 Ափսոս , հոն թակարդ լարած ,
 Սոխակն ինկաւ 'ի դարան .
 Ուր սիրտն երած ու վառած ,
 երգեց 'ի վարդն իւր յայնժամ .
 ինձ դաւ ըրին այդեստանք ,
 ինձ դաւ դրրաւ այդեպան . . .
 Բայց վարդին համար պատրանք ,
 իմ ուզածս այլ էր այս բան :

Նորահաս մանուկ տըղայ
 Տեսաւ զայս ու գըթացաւ ,
 Լըսեց խօսքն ու ժրպտեցաւ ,
 Յետոյ ելաւ որ երթայ . . .
 Բայց , ո՛վ վարանք , դուռն էր գոյ ,
 Եւ որմունք շատ բարձր էին ,
 Տեսաւ փեղկերն էին հոծ
 Ու ցանկապատ ամէն դին :
 Տեսաւ թէ ինքն արդիւած
 էր 'ի մէջ այդեստանին . . .

Ո՛վ հըրաչք անճառելի .
 Երեւեալ կոյս նաղելի
 Ասաց թէ դու իմ գերի .

Մակայն ամեն այս ծաղկունք
 Այս պըտուղքն և այս այգի ,
 Այս ամէն քոյ են , մանուկ :
 —Գէշ չէ այդ , ասաց տըղայն ,
 Մակայն ես չ'եմ այգեպան ,
 Ոչ շընորհացն արժանի ,
 Յոր իմաստունք յագենան :
 Ինձ , յեղյեղուկ պատանի
 Եւ բաղձանքով բաղմատենչ ,
 Քան զարգելան դըրախտի
 Լաւ է վաղել դաշտաց մէջ :
 Թափառական յամեն կողմն ,
 Սմեն ծաղկի հոտն առնել ,
 Ոչ կոխել , ոչ ժողվել մէկն ,
 Այլ միայն տեսնել անցնել :
 —Հա՛պա , ասաց կոյսն յայնժամ ,
 Այս վարդն այլուի քեզ կըտամ ,
 Պըսակ 'ի դըռնիդ անթառամ ,
 Տես . . . փախչելու ճար չըկան . . .

Նորահաս մանուկ տըղայն ,
 Թէպէտ անփորձ , խորամանկ
 Քան ըզհարուստ այգեպան
 Եւ ըզդուստըրն էր սակայն :
 Մէկ մի յայգին հայեցաւ ,
 Մէկ մ'ի ծաղկունքն որ շուրջ կայր ,
 Մէկ մի 'ի ծառն հովանեաւ ,

Մէկ մ'այլ յաղջին որ խայտայր . . .
 Յետոյ ասաց . — Այս դա՛ւ է ,
 Վրկայ ինձ վարդն ու սոխակ ,
 Դարան է , բայց թող ըլլայ
 Աղու աչաց այս պատրանք . . .

Աշխարհս է մեծ մի այգի ,
 Սոխակն յեղյեղուկ է մարդ ,
 Խայծը խաբուսիկ է վարդ ,
 Դարան է աչք գեղեցկի :

ՏՈՒՓ ՊԱՆԴՈՐԻ

Պանդովրի առասպելք, ճարտարեալ 'ի նախնեաց ,
 Ոչ վայրապար են բան և անխորհուրդ առած .
 Տուփ մի հըրաշալի , յոր Պանդորն համարուց
 Նախաստեղծն էւա , զամեն չարիք փակեց,
 Զոր բացեալ եպիմէթ , յաշխարհըս տարածեց .
 Միայն Յոյսըն մընաց, խաբուսիկ տըրիտուր :

Խորհուրդ առեղծուածին չ'է դժուարակընճիւ ,
 Եւ առանց դարձուածքի , յըստակ խօսելով բան ,
 Նըշանակէ թէ կինըն է ամեն իժիւր
 Ամեն չարեաց պատճառք , հեղինակ բընական .
 Թող կանայք ինձ ներեն , ըսողն ես չեմ 'ի գիւր .—
 Հապա ի՞նչ Ծընընդոց գիւրքն է , եւ ի՞նչ Աղամ :

Ո՞վ է սա որուն այտք փայլեն կարմիր 'ւ առոյգ ,
 Որուն դէմք ծիծաղկոտ և աչքերն են զըւարթ ,
 Յորոյ սիրտ բաբախեն մեծ ակընկալութիւնք ,
 Եւ վայելք անըսպառ տիոց երիտասարդ :

Յանկարծ խորշակ 'ի դէմսն փռչէ դալկահար ,
Երանգ.ք ցընդին . եղեգն է նա խորշակահար :

Քանզի կին մի՞նդ առաջ ճանապարհի նորա
Անցաւ . . . կայծակնահար կըտրիճըն կը մընայ .
Վառեալ հուր անսովոր 'ի մէջ երիկամանց ,
Գելու զաղիա նորա , գըլուխն է խոնարհած .
Խընդութիւնըն կորաւ և յոյս թըռաւ սըրտէն ,
Զոր ամբողջ գըրաւէ սէրն անգութ անօրէն :

Այդ սէրն ի՞նչ է , ոմանք կըսեն իբրյանխորհուրդ ,
Ի՞նչ նորելուկ հընարք , ի՞նչ եւրոպական սուտ ,
Պատուաստ օտարոտի , որոյ հարք մեր փոխան ,
Ունէին աղջիկտես , խընամուց ու փեսայն .
Ներեցէք , պարոններ , ներեցէք , խաթուններ ,
Տեսնէք թէ աշխարհի չափ գէթ հընուց է սէր :

Զեւա օճըն խաբեաց , իսկ ո՞ խաբեաց զԱդամ .
Ի՞նչ Արայն Գեղեցիկ և ի՞նչ է Շամիրամ ,
Ի՞նչ է Տըրովադայ պատերազմ ահարկու ,
Յորում ազգ.ք և ազինք անցանեն իրարու ,
Մէկ Հեղինեայ կուսին աղու աչաց համար ,
Զոր առեւանգած էր Պարիսըն սիրահար :

Ի՞նչ են վէպք Ալանաց նազելի աղջկան ,
Եւ նորա փափուկ մէջք , և շիկափուկ պարան
Արտաշիսի հըղօր թագաւորի ձըգել ,

Տալ նրմա շատ լայքա ու 'ի կրնութիւն առնել ,
կրնութիւն որ շատի նըստաւ Հայաստանեայց ,
Առանց որոյ գուցէ Հըռոմ էր յաղթըւած :

Ի՞նչ են Հաղար ու Ֆէ Բէշեր , Լէյլայ՝ Մէհնուն ,
Որուն խելքը թըռուց ժանտ սիրահարութիւն ,
Որ լեռներ ու ձորեր ինկած , հեգ խելագար ,
Մազերուն մէջ թըռչունք բոյն շինեցին հաղար ,
Եւ հոն հաւկիթ ածին , եւ 'ի թուխըս ձագեր ,
Առանց որ Լէյլայէ թըմբիրըն թօթափէր :

Բոլոր հին պատմութիւն և գիրք սիրոյ վերայ
Դըրած են բընաբան , և շարը կ'երկըննայ
Թէ մի ըզմիօջէ զամէներն յիշեաք .
Բաւ է թէ Աստուած սէր է , նոյնպէս արարածք :
Բայց զի սէր է բարի և է որ չարաչար ,
Ջանամք ախտին մօտիկ նըշանակել և ճար :

Երբ նորա մէկն 'ի ձեռըս մատնի անողոք ,
Եւ խըստապինտ պըրկեն նորա անրոց ոլորք ,
Զիք հընարք փըրկութեան , եւ ոչ ճար ու ճարակ ,
Բայց միայն փախըստեամբ 'ի ճիւղէն վայրադ
Եւ 'ի հըրոյն անշէջ , զերթ Մողոմն ու Գոմոր ,
Եւ զերթ Ղովտըն երբէք յետըս չը նայելով :

Բայց ուր յիմարութիւն տիրէ , խըրատն ունայն
Եւ ընդունայն են բանք խոհուն իմաստութեան .

Որոց անլուր մընաց երիտասարդն Արշակ ,
 Իւր համանուան նըման արքային ըստահակ ,
 Որ ըզհարըստութիւնն յանգեց Արշակունեաց ,
 Սապէս մերըս կըտրիճ իւր հօրն ու մօրն հետեաց ,

Հետեաց և 'ի մահիճ սըփուեցաւ ողեսպառ .
 Շատ բըժիշկներ եկան ու շատ դեղավաճառ ,
 Քանզի հարուստ էր հայրն , որք բան չը հասկըցան ,
 Որք ըզլեարդ և ըզթոք յետ շատ խառնակութեան ,
 Շատ ոգիք և փոշիք տըւին , շատ խաշընդեղ ,
 Նաեւ կըլլեցուցին հատիկով մըկընդեղ :

Աարդն եկաւ՝ տէրտիրոջ , յետ արու եստին մարդկան
 Որք դատապարտեցին ըղնա անդարձ մահուան .
 Սա էր Տէր Աւետիս , այր ուշիմ և խոհուն ,
 Որ իսկոյն հասկըցաւ նորա հիւանդութիւն ,
 Որ կարծես մոգական հըրաշալեօք փըրկեց
 Ըզխեղճ տըղայն , որուն սըրտին մէջ յոյս վառեց :

Խօսեցաւ մօրը հետ և հօրը հետ ծածուկ .
 Յետոյ և ծընողաց հետ աղջրկան փափուկ ,
 Զոր ոչ վարկապարադի չէին ուղեր ծընօղք
 Արշակայ առնուլ կին , քանզի քանի մի խօսք ,
 Քանի մի փըսփըսուկ ու շըշընկոց ցածուն
 Զայնիւ կը պատմէին կանայք վերայ նորուն :

Յետոյ տէր, Հայր կանչեց ըզժամկոչն ու ըսաւ .
 — Կուգե՞ս հազար բոլոր վաստըկիլ դու: — Իրա՞ն.
 Հապա ծառայ եմ, Տէր: — Ա՛ռ Մաշտոցն ու սովրէ:
 Թորոս հարսանեաց կարգն օրուան մէջ կը սերտէ .
 Եւ տէրտիրոջ հագուստն ու գըլխարկը հագած,
 Եկաւ հարսնիք, Աւետը փոքրաւոր տարած:

Ինչ որ Թորոս կապեց, նոյնը Աւետ լուծեց .
 Ու Հաւաօրհնէ+ին օրիորդը ժըպտեց,
 Ու երբ Արշակ ըսաւ, Տէր ե՛մ, դուստրը խընդաց,
 Թողցէ առ զհայրին, Արշակայ պըլլըւած,
 Եւ ոչ խաւ հանգըտեան ունկըն մատոյց եւ ոչ
 Երեւոյ՜ Խաղաղութեան, այլ ըրաւ քիթ ու պոչ,

Ու փարած ամուսնոյն, քաշեց լիրբն յառադաստ:
 Ապշութեամբ մեկնեցան հարսնեւորքըն ըզգաստ .
 Այնպէս որ այս պըսակն, 'ի շնորհըս Թորոսի,
 Եւ շընորհիւ անխիպ և աներէս կուսի,
 Եղաւ իրօք և ճիշդ ոչ թէ ամուսնութիւն,
 Այլ լըկտի, վաժաշոտ և պիղծ պոռընկութիւն:

Այս կերպ ամուսնութիւն լաստափայտ փըրկութեան
 Է որոց խելք սիրոյ 'ի ժայռըս փըշրեցան:
 Ինչո՞ւ ամուսնութեան բառն է ախորժալուր
 Ամուրեաց, իսկ այլոց պըժգալի, տաղտկալուր . .
 Վանդակ դըժոխըմբեր, կարծրակուռ, յոր կ'ուղեն
 Յարտաքուստ մըտանել և 'ի ներքուստ ելնեն:

Շուտ հասկըցաւ Արշակ իւր ըրած սրխալմուռնք.
 Նորա Անուշ ամիս չըտեւեց ութ աւուրք.
 Նա՛ առակին կատուն պատուելու չեղաւ ժամ.
 Զի կինըն, Մըխիթար Գօշի կատուն նըման,
 Զոր Դիոս փոխած էր 'ի կին, և որ ըզհետ
 Մըկան, տեսածին պէս, վաղեց, ու զան կուլ ետ,

Ութ օրուան մէջ բոլոր իւր բարքն 'ի յայտ հանեց,
 Բոլոր սըրտին թոյնը 'ի խեղճն Արշակ թափեց .
 Պոռաց ու կանչուրուտեց, գոռաց յերես նորա,
 Մինչեւ ծեծ ու փետ ալ, կըսեն, տըւաւ նըմա,
 Երկդիմի, խաբեբայ, արցունք կեղծուպատիր
 Ու շատ նազեր թափեց կամապաշտ ու նանիր :

Հակասութիւն, ո՛վ ժանտ կանացի յատկութիւն . . .
 Հակասութիւն անվերջ և միշտ և անընդհատ .
 Կընող սեւը ճերմակ, ճերմակն է թըխագոյն .
 Այնպէս որ Նիւսրէտտին, ոյր կին 'ի հեղեղատ
 Վիժած էր, հոսանաց դէմ խընդրել զայն կ'ելլար .
 Ըսելով թէ 'ի վաղըս ջըրոյն կին չ'երթար :

Խեղճ Արշակ, ի՞նչ ընէ, «քանդի այր արդար է»
 Իւր բաժակին մուրը պէտք է որ լի քամէ .
 Առագաստ սըրբազան և խուլ են սըրսկապանք .
 Ինչե՛ր ծածկեն դըրունք ընդ նըգաւ ամրափակ,
 Ի՞նչ նոխազերդութիւնք, կամ եղերերդութիւն,
 Կամ ի՞նչ ծաղր ու ծանակ և կատակերդութիւն :

Ափսոս, ասանկ եկաւ 'ւ ասանկ երթայ աշխարհք . . .
 Իւր սըրտին ցաւը գոյ պահեց լռիկ Արշակ :
 Տարի մ'ամբողջ անցաւ , որուն մէջ բռնադբօս
 Երեք հարիւր վաթսուն եւ հինգ լըսեց քարող ,
 Զորոնք անգլխացի հեղինակ մի ճարտար
 Ի գիր արձանացոյց , ու քըշեց բիւր հազար :

Նաեւ Արշակ խրփեց զաչըս նորա վարուց ,
 Մինչեւ անգամ անձամբ զանձըն պոռնկացոյց
 Ի նա . . . Այլ է այսչափ բաւական . մինչեւ որ
 Յուսահատած տըղայն և լըքած օրէ օր ,
 Անիծելով ըղլուծն և ըղբեռ ծանրաբերձ .
 Զըրհորին փեղկն եբաց և զինքը մէջ ձըգեց :

Երբ աչքերըն բացաւ , պառկած էր յանկողին ,
 Տէրտիրոջ ձեռն 'ի ձեռըն բռնած լալագին ,
 Զոր համբուրէր ըստէպ և արտասուօք թանայր ,
 Որոյ գորովալիր բիւր մակդիրներ կուտայր ,
 Որ նորա կըրկին հեղ աղատիչն էր եղած ,
 Գաղտնիքը յայտնելով , ու հարճը վըռընտած :

Աւելորդ է ըսել թէ բոլոր կեանքն Արշակ
 Ամուրի ապրեցաւ հանգիստ շատ ժամանակ ,
 Ալէղարդ ծերունւոյ Տէրտիրոջ հետ մէկտեղ ,
 Որոյ ալքը պատուեց յարգանօք ծայրայեղ :
 Ո՛վ բարի ժամանակ և բարի ծերունի ,
 Որոց անհետացան հետք 'ի վերայ երկրի . . .

Միայն երբ նազարան տեսնէր կին մի շքեթօղ,
 Եւ կամ թէ ցանկութիւն լինէր սիրտն ըզգացօղ,
 Յայնժամ գըլուխն առած երկու ձեռացը մէջ
 Ըղբարի հարկանել ըսպառնայր անընդմէջ .
 Եւ կամ թէ ժրպտելով սովոր էր ինքիւր դէմ
 Ըսել եթէ — Հիմա ժամկոչը կը կանչեմ :

Դարձեալ եթէ խորհուրդ մէկն հարցընէր նրմա,
 Մի՞թէ ամուսնանայ կամ ամուրի մընայ,
 Սույեէի Սաթանի Յէշտախարանայ
 Յընթերցումն յուղարկէր, և կամ թէ կըծկը...
 Յաղջրկան սըրսկապան օր մ'այցելու լինիլ...
 Յետոյ երկան իշոյ պարանոցէն կախուիլ :

Զի կընոջ հասարակ զէնք խորագիտութիւն
 Են, զըրահ ամրապահ, որուն տակն է թագուն,
 Եւ զորըս մերկանայ 'ի մէջ սըրսկապանին,
 Որոյ որմունք պահեն զինք յաչաց յօտարին .
 Ուստի ըսպառազէն զինեալ զըրահաւոր,
 Ելանէ վագը արտաքս և դռնայ ահաւոր...

Կալ Սաթանայի հետ, ենթադրենք գիշեր մը
 Տանց ձեղունք 'ւ առաստաղ բացուած նաև որմը,
 Տես Սհա՛ այս աղջիկ զոր կարծէիւր անմեղ,
 Հըլու իբրեւ զոչխար, է առիւծ մի ահեղ,
 Եւ այս կին որ էր հեղ, խոնարհ աղաւնոյ պէս,
 Զայրն իւր 'ի խաչ հանէ, և թըքանէ յերես :

Մեղայ . . . ոչ թէ 'ի խաչ , այլ իբր Սրիստոտէլ
 Զորքոտանւոյ նըման , խըթանի աքացել
 Զըտայ նըմին իսկ թոյլ . այլ խաղք ու խայտառակ
 Ողնաբեկ , քըրտնաթոր , ոգեսպառ զըւարակ ,
 Գըլել ըզսայլն անդուլ , կենաց երազատես . . .
 Կընոջ վատն է ժատթար , ոչ միջակ և ոչ կէս :

Եկ , Պայրըն , վէրքն ըսէ սըրտիդ կողկողագնի ,
 Միթէ աւելի ժանտ էր 'ի Միսոլունկի .
 Դու եւս , ո՛վ դառնաղէտ սիրտ յերաշխէպ , Միւսէ ,
 Մէկ այրադէմ զինեալ կընոջ մախանքն ըսէ ,
 Եւ ըզհեռն որ անզոյդ մախացաւ հանճարոցդ ,
 Եւ ժորժ Սանտի ծըխոյ և գինւոյն մէջ հեղձոյց :

Այս տեղըս գիտեմ թէ զիս պարսաւեն տիկնայք .
 Սակայն թէ մեւանչէք , գոնէ մի բարկանայք ,
 Եւ առանց դատելոյ , զիս մի դատապարտէք .
 Զեր բարւոյն ցանկացող եմ միշտ , հաւատացէք .
 Բայց ո՛ր է տեսնըւած որ երբ զախտն ու յանցանք
 Դըսրովեն , համարուի այն 'ի բանդագուշանք :

Յիրաւի , կանայք մեզ յանդիմանել կարեն
 Թ'օրէնք և պատուիրանք արանց ձեռագործ են ,
 Որք իրենց ուղածին պէս լրծոյ սաստկութեան
 Եւ մատնած են ըզկին հարըստահարութեան .
 Ի՞նչ յանցանք են կընոջ եթէ հեստէ նըմին ,
 Ո՞ր գերի որ գովէ ըզլուծ բըռնաւորին :

Մեր խօսք չեն ըզկանանց որք իրենց սրբազան
 Պաշտօնը կատարեն և պարտքը կը ճանչնան .
 Որք մատաղ մանկըտեաւ շուրջ և գիրկըս ածեալ
 Մընան պատկառելի զարդ մի շքեղափայլ
 Ի տես ամենեցուն , իբրը «կին ժըրագլուխ
 Է պըսակ անթառամ առն իւր 'ի գըլուխ» :

Ի՞նչ են այս ցընծութեան ձայնք հըրեշտակային,
 Փողոց և քընարաց հընչիւն զըւարթագին,
 Կանացի երգութեաց, և նըւագաց աւաչ
 Եւ ծափաձայն և կայթ և պարածուաց շառաչ.
 Գուսանի շըշընկոց և ոտից բիւր դոփիւնք.
 Եւ սուր սըրընգողաց արձագանքի կոփիւնք.
 Որո՞ւ են այս խընջոյք և կամ նաւակատիք.
 Ի՞նչ տօնախըմբութիւն է կամ թէ հարսանիք.
 — Խընջոյք են բաղանեաց իշխանին Շիրազի,
 Երգասիրին լըրջմիտ Շահ—Մահմուտ Կազնէվի,
 Որ ոչ ինչ առաւել քան զերգըս ախորժէր,
 Ու 'ի բաղանիս անգամ հըրճուելու սովոր էր:

Էր կից այս բաղանեաց սըրահ երգեցողաց,
 Այնպէս վարպետութեամբ շինած և յարդարած,
 Որ լըւացարանին լըւացողաց անտես
 Հընչէին նըւագօղք զիւրեանց երգըս պէս պէս,
 Եւ արձագանք տարեալ բաշխէին զայնս 'ի սփիւռ.

'Դ որորտըս չըրջակայ դարպասին ոսկեհուռ :
 Նոյն օր նըլագածուք զորդուոցըն Պարիսի ,
 Յորմէ Պարսք , երգէին զարարըս Եսպիսի :
 Ըզփառըս Բիշտատեանց նախնի նահապետաց ,
 Որոց գործք ըսքօղին 'ի ծոց ժամանակաց ,
 ԶԱքիմենեանց ծագումն առասպելապատում ,
 Որոց մեծըն ճէմշիտ ըսքանչելապատում
 Համարի նախահայր , ընդ նըմին և Զոհակ ,
 Զոր ծերըն խորենոյ թարգմանէ Աժդահակ
 Բիւրասպի , և զոր Պարսք անուանեն Ֆէրիտուն ,
 Իբր այն թէ առաջին պարսիկ իշխանազուն .
 Յետոյ Արշակունի և Սասանեանց զարմին
 Հայոց և Յունաց հետ անվերջ գըժտութիւննին .
 Հուսկ յետոյ Կազնէվեանց ըզփառըս և պարծանք ,
 Որոց բարձր 'ի գըլուխ Շահ—Մահմուտ էր պըսակ .
 Տի նա ըզՌոսդոմայ ըզնախճիրըս քաջի ,
 Որ Պարսից Աքիւլէս թըլի նախ առաջի ,
 Զորոյ խորենացին ըզնահատակութիւններ
 Անցնելով յիշելու ատենը , յառասպել
 Գըրէ յանոճ 'ւ անլուր , իբրեւ ըզՀերակլեայ ,
 Դից հըրաշապատում , և կամ ըզՎահագնեայ :

Ըսքանչացեալ Մահմուտ 'ի լուր երգարանաց ,
 Եւ ըսփոփեալ ոգիքն 'ի շահատակութեանց ,
 Եհարց թե՛ իւրում թէ ում էին երգեր ,
 Եւ ինչ անուն տաղիցս այս հեղինակին էր :
 —Տէր իմ , պատասխանեց թե՛ զայն ուշեղ ,

Տաղքըդ Շահնաֆին են դրրուադ հանճարեդ .
 Ո՛չ ապաքէն քերդօղն է ֆիրտէվսին դըժբաղդ ,
 Որ աքսորեալ 'ի քէն պանդըխտի 'ի Պաղտատ :
 —Շուտով, ըսաւ Մահմուտ , թող առնեն գերեդարձ
 Թըշուառ աքսորելոյն , քերդօղին գերապանծ .
 Եւ նորա հանճարոյ հըրաշափառ վայել
 Ընդունելութիւն մեծ կ'ուզեմ փոխան ընել :

Ներէ՛, ո՛վ ֆիրտէվսեայ ոգի անմահական,
 Թըշուատ լեզուին, որ քոյ անունդ է գովաբան .
 Եւ ապիկար գըրչի որ ըզքոյ Շահնաֆ
 Յանդըգնի գըծագրել, շեղեալ 'ի կարգ բանէ .
 Երեսուն տարի զայն գըրելու տըքնեցար ,
 Որ ապարունակէ տողս հարիւր քըսան հաղար .
 Անթիւ և անհամար էվաֆ ու Գասիդէ
 Եւ նոյնչափ դրրուագներ և Կուէլ ու Պեդէ .
 Յորըս զարմին պարսի ըզգործըս և զարար ,
 Եւ ըզփառըս պատմէ ոճով ծայրէ 'ի ծայր .
 Որոց իւրաքանչիւր տողին սակարկութիւն
 Ըրած էր Շահ—Մահմուտ ոսկի Բէ-ճէ ուրոյն
 Վըճարել , և յետոյ խընդրեց տալ արծաթի ,
 Ընդ որ յոյժ ըզչարեալ նեղացաւ ֆիրտէվսի :
 Արծաթասէր Շահին գանձերն յետըս դարձոյց ,
 Եւ նորա յապարանս այլ եւս ոտք չի մատոյց ,
 Որոյ համար իշխանըն զայրացեալ սըրտիւ ,
 Աքսորոյ հըրաման տըւած էր մեծ սաստիւ :

Պաղտատի ճանապարհն է սրբաւեալ ուղտերով,
 Շատուոր կարաւանաւ, բեռնաբարձ գըրաստով,
 Որ վեհանձն իշխանին առատաձեռն ընծայք,
 Հարիւր քրսան հազար ոսկի Քի-Քնի հարկ,
 Անթիւ ճոխ ըսպասներ, հարուստ կահ կարասի,
 Եւ թանկագին նըւէրքն անհամար տանէին
 Եւ ըզպատճէն Շահին ըզհըրովարտակին,
 Խնքնագիր ոսկեղօծ, յորում ըզՖիրտէվսի,
 Թախանձէր իրեն քով վերադառնալ ներող
 Մըտօք, ընդունելով խընդիրն ողոքաւոր:

Աւա՛ղ աւանդութեանն անողոք և անգութ...
 Հասեալ հոս, գըրիչս է փըշրելու հետամուտ,
 Քան թէ 'ի պատմութիւն անցիցն որ առջի կայ.
 Հազիւ մուտ կարաւանն ընդ դուռն Պաղտատայ,
 Ամբոխ մեծ անհամար ընդ դուռն հանդիպակաց
 Ելնէր յուղարկաւոր դագաղի յուս բարձած,
 Յորում գընէր մարմին քերթօղին Ֆիրտէվսի,
 Որ զանանց քուն նընջած յաւիտենից 'ի ծոց,
 Յաղցաւոր կենցաղոյս թըռած էր մեկուսի...
 Աւա՛ղ անցաւորի փառացրս և պատուոց...

Ի՞նչ ըրաւ Շահ—Մահմուտ 'ի լուր անտանելի
 Արկածիցըն, լըռեն զայն վէպք աղէտալի,
 Միայն քերթօղն Հաֆըզ գեղեցիկն 'ի Տէվն,
 Աւանդէ սուգ առած ըզբոլոր Պարսկաստան.
 Մարգարէին Դաւթի նըման, քուրձ ըզգեցեալ

Էր Շահն և 'ի մոխիր նոյն օրը թաթախեալ...
 Յետոյ ժամանակին ժանիք անկարեկիր
 Արկին 'ի մոռացոնս ըզսուգ փառաց նանիր :

Երնէկ քեզ, Ֆիրտէվսի, որ Մահմուտի պէս Շահ
 Զարմացող մ'ունեցար, կենդանութեանըդ շահ,
 Եւ 'ի մահու գէթ օր մ'ունեցար լացող զայն,
 Ար հիւսեց անթառամ պըսակ անմահութեան
 Քանինէր, որք 'ի կեանս հաղորդ չ'եղեն փառացդ,
 Որոց յուշն է կորած, և աճիւն անարգուած...

Գրծբանդ ծեր խորենոյ, մերըս քերթօղահայր,
 Որ պարծանք անուրաստ բոլոր ազգիս եղար,
 Աստանօր ըղքեզ, ո՞վ աշխարելիդ, յիշեմ,
 Եւ այս եղերական բանքըս քեզ նըւիրեմ.
 Որ կենօք չափ անդուլ'ւ անխոնջ աշխատութեամբ,
 Ի մոռացութենէ փրկեցեր զազդն անուամբ,
 Այսքանոյ փոխարէն քրտանց և տըքնութեանց,
 Ի դըրանէ 'ի դուռն մուրալով զիւր հաց,
 Կոյր և հաշմ և ալեօք ծաղկեալ հէք ծերունիս,
 Ի սեռմս եկեղեցւոյ, կը պատմէ փայտեցին,
 Սըփուած, սովալըլուկ, աւանդեց զիւր հոգին.
 Որոյ 'ի վարձ և ոչ մեռելաթաղ ըրին,
 Եւ այնրմ որ ողբաց ձայնիւ Հոմեթական,
 Ափ մը հող զըլացան փառաց խորենական.
 Եւ յետոյ պիղծ ձեռինք ըզգերեզման բացեալ,
 Նորա ոսկերքն 'ի հուր մատնեցին անարգեալ,

Եւ այն սուրբ նըշխարաց մընացորդն ու մոխիր
Արկին'ի գետ, և գետըն տարաւ ցան և ցիր . . .

.

Ես, որ եմս ապիկար 'ւ անարժան սովեստեա,
Սիրտըս երած ողբամ, ո՛վ Ծեր, զիս և ըզքեզ.
Աւանդ, զի եթէ զայդ առնեն ընդ փայտ դալար . . .
Լըռեա՛, երգանք, լըռեա՛, և կարկեանց, իմ քընար . . .

.
.

Վ Ե Ր Զ

ԱՌԱՋՆՈՅ ՄԱՍԻՆ

Դ Ի Ի Ա Ն

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Դ Ի Ի Ա Ն



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Տ Ա Ղ Ք

Խ Ի Կ Ա Ր Ի Կ Տ Ա Կ Ը

ՅՈՐԴՈՐԱԿ ԱՌ Մ. Յ. Գ. Հ.

Աշխարհքը աստընւորիս շահ չի մընար , ո՛վ անձ-
կալի ,

Բիւրք եկան բիւրք գընացին , հիւրք անցաւորք
անդառնալի ,

Հողանիւթ կեանքը սուղ է , սերմանածը չէ հըն-
ձելի ,

Լաւ սերմը լաւ գործը է , նա՛ միայն հետ է տանելի-
երնէ՛կ թէ պատուիրանքըս դընեա ակընջաց
օղակ :

Մարդը կատարեալ չ'ըլար , սիրելի , վարդ ան-
փուշ չ'ըլար ,

կեռասը առանց կուտի , առանց պատենի նուշ
չ'ըլար .

Առանց ցաւոյ խընդուլթիւն , առանց լեղւոյ անուշ
չ'ըլար .

Կըտրիճ կը մեռնի կ'երթայ , իր անունը անյուշ
չ'ըլար .

Լաւ անունը թանկագին է քան ըզմարդըրտի
շարք :

Աշխարհքը ... 'Էս գիտցիր ու մարդը ըմբշամարտ
գիտցիր .

Կեանքըս անվերջանալի անհաշտ ժակատամարտ
գիտցիր ,

Ով այս մարտէն աննրկուն ելնէ զայն քաջամարտ
գիտցիր ,

Իսկ ով յաղթըւի խնայ , զանիկայ չարաբաղդ
գիտցիր .

Ափսոս , իւր անկարողութեան երթայնա խեղճ
նահատակ :

Անգինը , ով աչաց լոյս , գանձուց , սիրէ , աշխա-
տանքը ,

Մըրջիւնին օրինակաւ , անձանձըրոյթ անդուլ
ջանքը .

Աշխատաւորին ձեռքը եւն ոսկի ապարանջանքը .

Եղլ մարդը կարօտութեան մէջը գլխէ թըշուառ
կեանքը .

վազուկ ձին 'ի յաւելուը ասեն, զիւր յարդն է
ատակ :

Կանանց հետ, ըզգոյշ կացիր , չըլայ վարքըդ թե
թեւ ասեմ .

Կինը արարչութեան մէկ ամենագեղ պարգեւ ա
սեմ .

Բայց թունալից պըտուղը պատէ աղնիւ կեղեւ ա
սեմ ,

Շատ հեղ գայլը ոչխարք մորթը կըրէ վերեւ ա
սեմ ,

Չըլայ ոսկի խընձորը ոսկեզօծ պատիր գըն
տակ :

Բայց ասեմ, խոհեմութիւն ամէն իմաստից մայրըն է,
Սընափառ հըպարտութիւն անմըտութեան խորթ
հայրըն է ,

Երկայնամըտութիւնը իմաստութեան տաճարըն է ,
Ըզգոյշ եղիր չընելու այն բանը ինչ որ չարըն է .

Այս է , իմ սըրտիս հատոր , խըղճուկ խիկա
րի կըտակ :

ՀԱՅԱՍՏԱՆ

Իւր փառաց յիշատակն անջինջ պիտի մընայ ,
 Եւ նորա սուրբ անուն պիտի ապրի անմահ ,
 Ծերք և տըղայք դարուց 'ի դարըս պատմեացեն
 Նորա անցքն անպատում և նախճիրք արութեան ,
 Եւ ազգէ մինչեւ յազգ ըզնա երանեացեն ,
 Երնէկ քեզ , Հայաստան :

Երնէկ քեզ , Հայաստան , երկիր երանաշնորհ ,
 Ուր մարդկային ազգի մերկացան խանձարուրք ,
 Ուր առաջին խորան կանգնեցաւ Աստուծոյ ,
 Ուր առաջին բարբառ խօսեցաւ հայկական ,
 Ուր եւ տապան Նոյի վերայ Այրարատոյ ,
 Ուստ 'էջ 'ի Հայաստան :

Հայաստան , հայրենիք հայորեար դիւցազանց ,
 Հայկայ և Արամայ , աննըկուն վարդանանց ,
 Առիւծուն լեւոնի և վագեր Տիգրանայ ,
 Եւ որ հերձոյր ըզվէմըս եղընդամբ Տորքայն ,
 Որոց գործք քաջութեան դողացուցին զաշխարհ ,
 Երնէկ քեզ , Հայաստան :

Երեցըս երանի՛, երկիր հըրաշաղան ,
 Որ պահեցեր զաւանդս ոգւոյն անապական ,
 Զոր ոչ ցեց և ուտի՛մ ապականել կըրցան ,
 Եւ ոչ ամենածախ ժամանակին ժանիք ,
 Երբ ցիր ու ցան սըփուեց բաղդին դատակընիք
 Զորդիս քոյ , Հայաստան :

Աւանդ քեզ՝ Հայաստան , երկիր չըւառական ,
 Զոր հէն և ասպատակ արար ոտից կոխան
 Զորոյ շէն քաղաքներն ու մարդաշատ շէնէր
 Արարին անբընակ աւերակ հիմն 'ի վեր :
 Եւ դերեցան տարան մինչեւ 'ի խորասան
 Դըստերք քո , Հայաստան :

Ուստերք քո և դըստերք , բայց ոչ և ուշ մըտաց ,
 Ուր յանտաշ որձաքար հայրենիք են գըրած ,
 Ոչ ոգիդ որ անդուլ հառաչէ անձկայրեաց ,
 Եւ ջերաջերմ յուսով բորբոքեալ նորաղգած ,
 Տաճար՝ իմաստութեան կանդնէ հիմն անսասան
 Ի նորըս Հայաստան :

ՅԱԻ

Ա.

Ա՛յ է սա , որոյ ճակատ
է բիւր կընճռովք աղօսած ,
Որուն նայուածքը է ժանտ ,
’ի աղւաները կըրճըտած .
Խոժոռադէմ , ահարկու ,
Զորսդին սարսափ կը սըփուէ .
Թէ մէկն աղանջը խըցէ ,
Նորա սիրտը կը զեղու ։
Յամաք ու ծովու վերայ
Մարդուս անմեկին ընկեր
Եւ իբր անոր սեռւ ըստուեր ,
Նորա ընդ հետ կը փութայ ։
Անկոչ անյագ կոչնական
Բազմի’ խընճոյս նախաթու .
Եւ նըգափակ մէջ դըրան
Սողայ զեռուն թունաւոր ,
Ի շինական տընակէ

Եւ 'ի մահճէ տըքնութեան
 Մինչ 'ի գահն արքունական
 Միահեծան նա իշխէ :
 Ի հիւսիսոյ մինչ հարաւ ,
 Եւ մինչ 'ի դըժոխս անգամ ,
 Ընդ նորա հըրամանաւ
 Խոնարհի ազգըս մարդկան :
 Տառապանք և հեծութիւն ,
 Նըղովք , արիւն և շարաւ ,
 Եւ մահ արբանեակք նորուն . . ,
 Նորա անունը է Յաւ . . .

Բ.

Խոր խաւարին խոժոռ տէր ,
 Սանդարամետ սեւադէմ
 Օր մի բազմեալ 'ի շէկ բեմ ,
 Զիւրըս զիւրեւ ժողովէր :
 Սէգ գահերեցն ակըմբին ,
 Որոյ ամեն մէկ ակնարկ
 Եւ ամէն մէկ բան բերնին
 Էն առ Աստուած հայհոյանք ,
 Զայնիւ բարձու տըրտընջէր
 Զարարչէն ամէնազօր ,
 Որ զազգ մարդկան է ստեղծեր
 Քան ըզդեւոց փառաւոր .
 Տիրաշունչ հողւով պըճնեալ

Եւ մարմնով նրմին զուգորդ ,
 Եւ 'ի կեանքս հանդերձեալ
 Անմահ փառացըն կըցորդ :
 Սեւադէմ տէրըն գոռաց ,
 Անիծից բըխեց ծորան ,
 Մինչեւ դըժոխք որոտաց
 Եւ դեւք ահիւ սարսեցան :
 Յաղեղանէն լայնալիճ
 Նետ թաթախեալ 'ի ճահին
 Թունոյ , ձըդեց ժանգալիւր ,
 Եւ Յաւ ծընաւ 'ի յերկիր :
 Յաւ յերկունքս ծընընդոց ,
 Զոր ընդ մըտանել յաշխարհ
 Բերէ ընդ իւրեւ 'ի կոծ
 Երեխայն և 'ի յաշխար :
 Ի սկըզբան անըղդալի ,
 Դիւրաբեռն և աննըշան ,
 Յետոյ տակաւ սոսկալի
 Յորժամ արբունք լըրանան :
 Որդ մի փոքրիկ կամ հիւլէ ,
 Որ գոյանայ մէջ սըրտի .
 Զոր կըրծէ , մաշէ , հալէ ,
 Ծառ որդնակեր , որ փըտի :

Գ.

Երբ միանգամ յորոգայթ
 իւր արկանէ մէկըն ծաւ ,
 Եւ յօշատեն ըզնա ժանտ
 Ժանիք արիւնաթաթաւ ,
 Նորա համար ընդունայն
 Էյոյս ակընկալութեան :
 Արեւն անոր ոչ կ'եղնէ
 Եւ ոչ մարը կը մըտնէ ,
 Գանձք ճոխութեան անօգուտ ,
 Չարն ու բարին այլ է սուտ ,
 Եւ 'ի ծոց առատութեան
 Ի քաղցէ կը լըլկի այն :
 Խոր խաւարի մըղձաւանճ
 Իւր անթափանց քօղին տակ
 Սեղմէ ըզնա անհառաչ ,
 Ոչ ճիկ և ոչ հեծկըլտանք . . .
 Թէ դալ ուղէ կամ երթալ
 Կամք բաւական չ'ունենար .
 Հարթ ճամբուն մէջ տեղն հասած ,
 Ծընկւըները կը դողան .
 Երերած ու այլայլած ,
 Ըղեղն ու կամքը սառած ,
 Ինք իրեն 'ւ 'ի շըրջակայ
 Ծանրը բեռ մը կը դառնայ :

Շունչ մի թ'առնէ հեշտարար ,
 Աւ կը խըղդի ջընչասպառ .
 Աչ կենդանի , ոչ մեռեալ ,
 վարանեալ և տատանեալ ,
 Ըրածին ըստըրջալով ,
 Ընելիքն անարգելով ,
 Յարածամ հակասութիւն
 Եւ առեղծուած մ'է համբուն :
 Յաւն անիծեալ նորա սիրտ
 Եւ գըրաւած է հողին ,
 Այնպէս որ յար անձանձիր ,
 Եւ թոյլ երբէք չէ նըմին :
 Երբեմն ազատ , միշտ գերի ,
 Եւ անշարժ կամ յերերի ,
 Տեղը գամած կը մընայ ,
 Զոհ դըժոխաց անխընայ . . .

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆՑ

ԱՌ ԿԻՆ ՄԻ ԱՅՐԻ

Ո՛վ դու, որ նախամօր ժառանգ ես հեծութեանց
Եւ սիրասո՛ւն 'ի մարգս աղիտից դառնորակ,
Յաւոց անպարագիր ծիրն ըստուար ոլորած,
Եւ ըզկենաց լեղւոյն քամած ես ըզբաժակ.
Քոյ հոգիդ դառնութեամբ լրցուած է անպատում,
Կըրած ես ինչ որ կարն է կըրել մարդկօրէն,
Ծընօղ և ամուսին, զաւակ և ագգատոհմ,
Ամէնուն սուգն առած, բաժնըւած ամենէն,
Չեւ քովդ ես կափուցեր աչքերնին ու թաղեր
Հաղիւ մանկութենէ դու ելած, քոյ մանկունք...
Աղջիկ, կին և մայր, տառապեալ միշտ եղեր,
Եւ եւրս չարաբասդ այրւոյ տառապանօք...
Իրաւ է քո ցաւերն ու դանդատ չ'են խօսքեր.
Աղէտից մէջ ծընած ու սիրտըդ շըւարած,
Յետոյ սալի նըման բախմանէ զօրացեր,
Եւ խոհական մըտօք յերկրէս է վերացած:

Ո՛չ , չէ գանգատ քու խօսքն , և մինչ հողիդ ցաւէ
 Եւ սըգոյ բեռին տակ հառաչէ անձկայրեաց .
 Դեռ զըւարթ է երեսդ և զըւարթ կը ժրպտէ
 Մարդոց առջեւ սըրտիդ խորին վերքըն ծածկած .
 Լոյս 'ի մէջ գիշերի , զոր խաւար ոչ ծածկէ ,
 Կայծ անշէջ ընդ մոխրոց պահպանեալ հովանեաւ ,
 Ծաղիկ տերեւաթափ , բայց ոչ զուրկ 'ի հոտէն ,
 Շուշան 'ի հող ծըռած , բայց ամբիծ բաժակաւ :

Երբեմն 'ի խոր սըրտիդ իջեալ խորհըրդով ,
 Եւ մըրըրկեալ կենաց քոյ անցելոյն խոկմամբ ,
 Կ'ըսես սակայն թէ ի՞նչ այս կեանքն է և վըրդով
 Երանք է թէ տեսիլ , մըրրիկ հողմըն և ամպ .
 Մասուն արդեօք երկնային , թէ սիրոյ է նըշան ,
 Պատուհաս երկնառաք , թէ զոհ մի քաւութեան :
 Ի՞նչ է և ինչո՞ւ դուն 'ի ծոց առատութեան
 Ծընած և գեղեցիկ յուսերու յորորան ,
 Ազնիւ ձըրքերով , ազնուական բարքով ,
 Ազնուագոյն դիմօք զարգարած աննըման ,
 Ինչո՞ւ , զուրկ յայս ամէն դու 'ի մասնէ բարեաց ,
 Խըստավէր աղէտից զոհ ըլլաս խոնարհած . . .
 Յետոյ ուշաբերեալ , կ'ըսես , Ունայնութիւն . . .
 Ունայնութեանց աշխարհ , ամե ինչ է ունայն . . .
 Կին դու , իրա՛ւ է խօսքդ և իրա՛ւ պատմութիւն ,
 Պատմութիւն է քոյ կեանք բոլոր ազգի մարդկան .
 Ոչ երազ , ոչ տեսիլ , ոչ սուտ , ոչ պատուհաս ,
 Ոչ , այլ ունայնութիւն , ունայնութիւն բընաւ ,

Թէ՛ 'ի ծոց ակներեւ վառաց կամ թէ վըշտաց ,
 Թէ՛ 'ի վերայ դահուց , թէ՛ հիւղից ընդ յարկաւ . . .
 Երանի՛ որ գիտէ ատել զաշխարհի ցաւն ,
 Որ՛ 'ի մէջ ծովածովի ալեաց ըսպառագէն
 Զինեալ է արութեամբ յըստակ ուղղել զիւր նաւն .
 Որ գիտէ աշխարհի վերայ յոյս չըդընել ,
 Ոչ՛ 'ի վըշտէն տըրտմիլ , ոչ խընդու թեամբ խընդ ալ .
 Պէս մանկան ըղբաղեալ իւր ժամերն անցընել . . .
 Կին՛ դու , աչքըդ սըրբէ՛ . . . կան ուրախ օրեր այլ .

Ի ՄԱՆԿԻԿ ԴԵՌԱՀԱՍ

Գոհար, զոր կը ցանկան սիրտք անյաղ և բաղձանք,
 Գոհար, զոր կը սիրեն ամեն սրբտից տենչանք,
 Գոհար, վարդ վառ առեալ պըսա՞կ մէջ մետաղաց,
 Թէ ընդ դալար խոտով մանիշակ ես ծածկած:
 Յո՞ր խորոց հանքերու կըգաս Հընդկաստանին,
 Կամ ո՞ր ճոխ գանձերէ թագադանց թանկագին.
 Գոհա՞ր ես, քար աղնիւ, ադամանդ կամ յակինդ.
 Թէ ծաղիկ լուսափայլ, թէ օղ, մանեակ կամ գինդ:

Մէկ մի ամալ, մէկ մ'արեւ, մէկ մի լաց, մէկ խընդում,
 Մերթ ցօղեա մարգըրտի շարք աչերէդ տըրտում.
 Կամ զըւարթ երեսօք սըփռեա լոյս համաափիւռ,
 Աշխարհս յոտըն կանգնի տեսնել ըզքեղ յակճիւռ.
 Երբ յօնքերըդ կընճուեա, ու սաստեա ամէնուն,
 Ոչ հայր կը ճանաչեա և ոչ մօրդ ես սիրուն,
 Ոչ խաղ, ոչ խաղալիք, ոչ ժըպիտ դէմք անուշ.
 Ասա՛, ի՞նչ ես, կախարդ, թէ հրեշտակ մի անյուշ:

Գիտես թէ քո նաղերն ամէն մարդ ժուժկալել
 Պատրաստ են և յօժար, անոր համար ոչ սաստ,
 Ոչ խօսք մըտիկ կ'ընես, ամէնը տաս ծաղրել
 Քո պարզամիտ բանիւ ու խաղերովն ըզգաստ.
 Միմոսի պէս զըւարթ թեւերդ որ կը բանաս,
 Կարծես բոլոր աշխարհք անոր մէջ ընդգըրկել,
 Երբեմն ալ անխընայ կ'ելլես սաստել, նաղել...
 Զըզիտես ինչ բաշխել, շընորհք թէ պատուհաս:

Դու քո փառքըն գիտես, գիտես թէ նաղելի
 Ամենէն ես գըզլած, ամէնուն փարելի.
 Գիտես չարաճըճի սըրամիտ հանճարով,
 Զանաղանել քո շուրջ նաժիշտն ըսպասաւոր
 Սիրամարդ դաշտերու, գիտես փետրոցըդ զարդ,
 Ակըն գոհար, գիտես քարին մէջ ապագայդ,
 Երբ գըրկախառն 'ի գիրկ ածիս թեւտարած,
 Ասա՛ տեսնեմ, մանուկ թէ սուլդան ես անկարծ:

Հապա ի՞նչ ես, իրօք. — Հոգի անճառելի,
 Միանգամայն և այլ ձիրքերով աւելի.
 Զի անմեղ ես մանուկ, սիրտդ է սուրբ և անկեղծ,
 Միտքդ է չարեաց անդէտ, քունդ անպըղտոր անեղծ:
 Ո՛հ, քոյ մանուկ տիոց երկամեայ գիտցիր գինն,
 Ո՛վ գիտէ ինչ պատրանք են հասուն հասակին,
 Քանի՛ օտից դարան, և քանի՛ սըրտիդ վէրք...
 Զըլլայ վանակըն սուտ անդին գոհարն, ըստուերք:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք Մ Օ Ր

Ո Ր Դ Ե Կ Ի Ն

Նընջէ՛ , որդեակ , քուն անուշիկ ,
Պատեն զըւարթ քեզ երազներ ,
Յորչափ մաղթէ մօրըդ ձենիկ
Քեզ անհատնում երկան օրեր :

Երբ մօրդ 'ի ծոց ես գըրկըւած
Անհաս ձեռօք բազկատարած ,
Դուն նընջէ՛ , ես հըսկեմ վըրադ ,
Դուն նընջէ՛ , ես երգեմ զըւարթ :

Երնէ՛կ , որդեակ , այս օրերուդ ,
Ա՛խ , վաղանցուկ են այդ ժամեր ,
Կըտրիճ հասակն որ կուգայ շուտ
Չըտայ՝ փընտռել քեզ զայն օրեր :

Չըտայ՝ փախչել քենէ այդ քուն ,
Չըլլայ բախեա կուրծ շընչասպառ ,

Ձրտայ այտիցըդ շառագոյն ,
կընճռօք թռումել , վարդ դալկահար :

Դուն մօրըդ յոյս միակ անսուտ ,
Երբ ծեր օրերն ըզնա ընկճեն ,
Պիտի դիմէ , որդեակ , քո մօտ ,
Ու դուն ըլլաս իր ապուէն :

Նընջէ , որդեակ իմ , անղարթուն ,
Քեզ 'ի բարձիկ մօրդ են ծոցեր ,
Քեզ իմ երգեր տան անուշ քուն ,
Քեզ իմ մաղթանք երկան օրեր :

Երբ ըզմայլուն աչօք զարթնուս ,
Ժըպիտ 'ի դէմըս կարմրորակ ,
Շարժես ոտունքդ ու ձեռք և ուս ,
Զինչ խողակէն թըռած հարսնեակ ,

Յայնժամ կապերդ ես արձըկեմ ,
Ծարաւդ ըստեամբս յագեցընեմ ,
Ոսկի խընձոր երեսիդ դէմ ,
Շըրթունքս անյագ կափուցանեմ :

Թեւօք մարմինըդ կը պատեմ ,
Աչքս 'ի յաչուկդ հանգչեցընեմ ,
Դըրկիս վըրան բաղմեցընեմ ,
Ու թէ նընջեմ , քեզ երաղեմ :

Թէ ես թըռչուն մ'ըլլէի ,
 Երկրէ երկինք թըռչէի ,
 Լեռներ ձորեր կըտրէի ,
 Եարոջ խընդիր ելնէի :

Թէ թիթռան թեւն ունէի ,
 Անոր խըցիկն ինկնէի ,
 Բարձիկն 'ի վեր նըստէի ,
 Բարձիցն 'ի վեր վազէի :

Թէ ես հողմունք մ'ըլլէի ,
 Զով զեփիւռ կը փըչէի ,
 Անոր մաղերուն մէջէն
 Երեսիկն համբուրէի :

Թէ արեւ , լուսով պայծառ ,
 Մարմնոյն վըրայ զերթ դոհար

Ճառագայթներ սրփռէի ,
Հոնց որ համակ փալփրլար :

Թէ լուսին , եմ ամօթխած
Սիրահար, դիմօք ծածկած ,
Ոստոց տերեւոց միջի
Ծարւած աչերով կանգնած :

Ձերթ թըռչուն , թիթեռն ու հով ,
Թեւ թեթեւ , արագ ոտով ,
Օրն 'ի բուն պէս արեւու ,
Շուրջ եկայ եարօջ հետով .

Գիշերըն պէս լուսնեկի ,
Սիրեցի մենակ դաշտեր ,
Մենակ խորշերուն մէջի
Փաթթեցի գլրկացս 'ի վեր . . .

ԵՐԳ ԲԱՂԱՆԵԱՅ

ԲԱՂԱՆԵՊԱՆ

Զուր

Մաքուր ,

Օճառ

Փըրփուր

Յոսկի թասէ

Ականակուռ

Հոսէ ,

Հոս է

Աղբիւր

Ի բոյր

Զերմիկ ջրոյ ,

Հանգիստ քընոյ

Հոս է

Թըմբիւր :

ԲԱՂՆԵԻՈՐ

Զուր

Մաքուր ,

Օճառ

Փըրփուր

Յաւազանէ

Սուտաբուխ

Յուշիկ ,

Յուշիկ ,

Կեսո՛ւր ,

Լեցո՛ւր ,

Փափուկ բազմոց ,

Բարձ և ծածկոց ,

Կեսո՛ւր ,

Ինձ տո՛ւր :

ԲԱՂՆԵՊԱՆ

Հարսն իմ , մաղերդ են ոսկեթել ,

Ու մետաքսէ ունիս ծոպեր ,

Զուր 'ի թասէ ջերմիկ հոսեմ ,

Սիրաւդ վազէ ու ես երգեմ ,

Զուր , ելն :

ԲԱՂՆԵԻՈՐ

Ես կը սիրեմ տաք ջրոյ տաշտ ,

Կոփիւն կոնքաց , օճառի դաշտ ,

Ես կը սիրեմ մաղ հոլանի

Նըստել 'ի ծայր ջերմաքարի .
Զուր ևլն :

ԲԱՂՆԵՊԱՆ

Ասուի նըման այդ քո մարմին
Համակելով մէջ սապոնին ,
Գործ է գիտել շատ դըժուարին
Թէ ո՞ր սապոնն է ո՞ր մարմին :
Զուր , ևլն :

ԲԱՂՆԵԻՈՐ

Մայր բաղնեպան, տաքն է խիստ շատ,
Նըւաղեցաւ հողիս զըւարթ ,
Սեւաւ մութ պատեց զիմ լոյս աչքեր ,
Քրչիկ մ'ալ պաղ լեցո՛ւ ջրեր :
Զուր , ևլն :

ԲԱՂՆԵՊԱՆ

Քո կուրծք նըման են յանմաշ քար
Աւաղանիս անմահարար ,
Քո ոլորակ թեւք և բազուկ
Փայլեն ոլորկ զինչ կըճեայ սիւնք .
Զուր , ևլն :

ԲԱՂՆԵԻՈՐ

Մայր բաղնեպան , ե՛լ դուռն բաց ,
Ինձ մետաքսէ վարչամակ անձ ,

Եկո՛ւ փաթթեմ թեւ 'ի քոյ ուս ,
 Տա՛ր զովանոց զիս , հանէ՛ դուրս :
 Զուր , ելն :

ԲԱՂՆԵՊԱՆ

Հարսն իմ , սըրբեմ՝ քեզ շըղարշիւ ,
 Գըլուխդ օծեմ իւղ անուշիւ ,
 Թեւ թեւ սանտրեմ , տո՛ւր մի համբոյր ,
 Յետոյ աչերդ հայելոյն տուր :
 Զուր , ելն :

ԲԱՂՆԵԻՈՐ

Անուշ անուշ են այս ջրեր ,
 Անուշ անուշ են մօր խօսքեր ,
 Անուշ է քուն 'ի բաղանեաց ,
 Անուշ երազ քան ըզկենաց :
 Զուր , ելն :

ԵՐԱՆՈՒՀԻ

Երբեմն Արարիչն էր զըւարթ ոգւով ,
Յայնժամ յիւր պատկեր ըստեղծեց ըղբեզ ,
Կոյս մի զարդարուն այնքան գեղերով ,
Որ ըսքանչացաւ ինքն իսկ 'ի քո տես :

Երկինք յաչրս քո են , և աչք յերկին .
Պէս լուսաւորաց փայլեն գիշերին ,
Աստղունք յաչերէ՞դ գողանան ըզլոյս ,
Զըգիտեմ , թէ դո՞ւ յաստեղաց առնուս :

Վասըն քո երբեմն ըստեղծան երանգք ,
Վարդըն զիւր թերթիկ վասըն քո երաց ,
Վասըն քո շուշան , վասըն քո մեխակ ,
Վասըն քո մարգրիտ 'ի ծովու ծածկած :

Պատկերդ յերանգաց , այտերդ 'ի վարդէն ,
Մարմինդ է շուշան , շըրթունքդ են մեխակ ,

Վարսագեղ օղակք 'ի գըլուխ հիւսկէն ,
Եւ ծածանի յուս քո ծով հերարձակ :

Չէ՛ ծիրանի ծիր քան ըղբեղ պայծառ ,
Չէ՛ մարգրիտ 'ի ծով քան ըղբեղ մաքուր ,
Սեաւ է ձիւնն առ քեւ և ալեաց փըրփուր ,
Եւ քո մազերէդ գիշեր չէ խաւար :

Բայց վարդ , մանիշակ , լուսին և արեւ ,
Եւ ծով իբր ըստուեր ցըրին քո առջեւ .
Արեւ , մի՛ ծագի , լուսնիկ դու մ'եյներ ,
Քանի կը շողան նորա փայլ աչեր :

Գանձս անհատնում եդ այդրէն կենարար ,
Սըրտիդ ըզգացմանց կենդանի բարբառ ,
Ծիր լայնատարած ծովու անսահման .
Եւ ծաղկազըլարն դըրախտ փափկութեան :

Ծով , այո՛ , անեզր երբ խորհուրդ խորին
Յանշարժ հայեցուած ձուլէ ըզնոսին .
Ըզմայլած պըշնուն յայնժամ բիբք նըլաղ ,
Մաքրափայլ ցօղոյ սուզեալք 'ի նուրբ շաղ :

Երբեմն 'ի համբոյր թաւուտ արտեւան
Մատչի գիրկընդխառն 'ի քըթթել ական .
Իբրու հողմն հեզիկ 'ի ծովու շընչեալ
Պագնէ մըկանունքն անոր ծալ 'ի ծալ :

Երբեմն հըրեղէն նըշոյլք ցօլանան ,
 Ժըպիտք բերկրութեան կամ սիրոյ նըշան ,
 կամ տիրութեան անարկութիւն վըսեմ
 կամ խանդաղատանք և յոյս երկնաճեմ :

Յայնժամ երփներանգ աչք քո են ծաղկոց ,
 Հայելի խայտակն անճառ խորհըրդոց .
 Յորում բեկբեկին ճառադայթք սըրտի ,
 Յորում նըկարի ոգիդ կենդանի :

ԲԱՂԴ

Ըստուերք ըզհետ ոտին ,
Եւ ոտք նոցին հետայն ,
Փութան միշտ անմեկին ,
Իրերաց անժաման :

Հողմունք ըզհետ ամպոց ,
Եւ ամպ ըզհետ լուսնին .
Լուսին 'ի ծովուն ծոց ,
Եւ ծով ըզհետ նաւին ,

Նաւ 'ի նաւահանգիստ ,
Նաւորդ 'ի բեւեռ կոյս
Դիմեն , իսկ փախչէ միշտ
Ծովեզըր 'ի սոցունց :

Մինչդեռ 'ի զուր բաղդին
Եմք անդուլ հետամուտ ,

Իսկ սա 'ի մէնջ մէկին
Գրնայ անմօտալուտ .

Յարաշարժ յեղյեղուկ ,
Թէ երբեմն իսկ հանդչէ ,
Այլ կեանք մարդկան , եղունկ .
Արագագոյն թըռչէ :

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՒԹԻՒՆ

Ծով ծաւալէր ծագաց 'ի ծագս համատարած ,
 Հայերւոյ պէս ողորկ , սաւանի պէս սրփռած ,
 Եւ նորա արծաթի փայլուն մակերեւոյթ
 Իւր ափանց հետ խաղայր տրդու մը պէս անփոյթ .
 Իբր 'ի քուն անմեղի և անխըռով նընջէր ,
 Երբեմն աղաւնակերպ ձայնիւ հեղիկ մընչէր :
 Երեկոյ էր հասեալ և ժամ էր հանգըստի ,
 Խորթայր գեանատարած 'ի խելրս նաւաստի .
 Յանկարծ շընչեց հիւսիս գոռալով սանձարձակ ,
 Ծովուն լանջքն բարձեալ յուռուցիկ 'ի կոհակ .
 Որ խրրոխտ մուգին խըղեալ կատաղաբար
 Իւր շղթայքն , յարձակէր ծովափանց ոտընհար .
 Կարծես զանանք փըշրել կամէր և կամ ծածկել
 Զամէն երկրի երես և զաշխարհ կըլանել .
 Եւ ծագաց մինչ 'ի ծագս անհուն տարածութեան
 Իւր միակերպ ծըփանքն հընչեցընել միայն :
 Զայն բարձրաձայն գոչեաց և զարթեալ 'ի քընոյ
 Նաւաստին ահաբեկ 'ի տես լաստին իւրոյ

Երերեալ զերթ չընչին խաղալի մանկական
 Եւ պըրկեալ իբր յօձոյ շուրջանակի գազան
 Ի ձեռն այս անողոք տարեր ջըրատեսակ,
 Անողոք քան զառիւծ կամ ըզվագըր վայրագ,
 Անողոք քան ըզմարդն անգամ որ առ 'ի շահ
 Անձին անխըղճաբար զոհէ զամէն աշխարհ.
 Սա ոչ զանձնասիրին իսկ ունի պատըրուակ,
 Սորա ոչ երիկամն և ոչ իղձ է անյագ
 Բայց միայն 'ի լընուլ զիւր անյագ որովայն
 Շեղջիւք աւերածոյ, դիզանաւ դիական,
 Որ բանակ մի բիւրուց առ ական թօթափել
 Կըրնայ խորասուզեալ անհետական առնել.
 Որ ըզփարաւոնին երբեմն 'ի Կարմիր ծով
 Ընկեց ըզգունդն ըստուար կառօք և հեծելով
 Որ ոչ առ այլն անսայ բայց ձայնին որ ասաց
 Թէ «Յայդ վայր եկեսցես և անդրէն խորտակեաց:

ՏԵՐ ԶՕՐՈՒԹԵԱՆՑ

Մեծ է Տէր և զօրութիւն բազկի նորա անյաղթելի.
Որ 'ի Տէր յուսացաւ, յաւիտեան մի ամաչեսցէ.
Նա զձեռանէ կաշնու մանկան 'ի խանձարրոյ ան-
տիական,

Ընդ լեռուն առաջնորդէ և ընդ ալիս ծովու անքոյթ,
Ծագք բլրոց խոնարհին իբեւ ըզդաշտ գետնատա-
րած,

Եւ սաստ մըրրկածուի ծովուն մընչէ հեղա-
համբոյր,

Դրունք երկաթիք խորտակին և կարծրակուռ որ
մոց խըրամք.

Պահք և պահակք շըւարեալ տան առաջի նորա
տեղի,

Ոյց ընդ մէջ հատեալ անցեալ 'ի յաղթանակ փա-
ռաց դիմէ

Թւր Տէրն է ուղեկից և ուր հոգոս և Լապանեն ոչ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ
Ի ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ

Ի հովտաց Ադինական, 'ի Բիւրականց ծաղկանըկար,
Յափնածիր ծիծաղադէմ յեղերաց վոսփորոնին,
Ուր երկրորդ մեր հայրենիք, ուր գըրկալիր աւ-
պընջական,

Յըրուելոցըս անտէրունջ ըսափիւռ եկաց Բիւղան-
դիոն,

Աստ ուրեմըն թռիչս առեալ սլացմամբ ծովէն յԱդ-
րիական

Դադարէ պանդուխտ ոգի մեծին Հայկայ թափա-
ռական,

Որպէս փայտն աւանդակիր մարդկան ազգի 'ի
'ի յԱյրարատ,

Զոր երկրորդն այն նահապետ բնաւից որդւոցըս
Թորգոմայ,

Մըխիթար լուսանորոգ ղեկավարեալ ընդ մէջ ա-
լեաց,

Եւ երկրորդըն վաղարշակ , հետոյց նորին ընթա-
ցակից ,

Մուրատն որբասէր , հասոյց յանքոյթ նաւահան-
դիստ .

Ըզցըրուեալսն ժողովեաց , զորքն և լըքեալ ե-
բարց յիւր ծոց ,

Եւ 'ի հունն անդ բարձրաբերձ կանգնեալ կառոյց
զայս ամբարտակ ,

Զոր ոչ սաստն անդ-ընդային տըգիտութեան և մա-
խանաց

Կործանել կարեն բախմամբ յիրան անտաշ որձա-
քարին ,

Եւ ուր նաւք թորգոմաղնեաց 'ի ցասմանէ տա-
րերց զերծեալք ,

Նըշմարեն յուսապատար ըզփըրկաւէտ լոյս փա-
րոսին ,

Եւ մերձենան խընդութեամբ ճըգանցն 'ի կէտ
ճըգել խարխալս :

Աստ , ուր անմերձ գոն շուինթ և շըշուկ աշխար-
հածուի ,

Ուր սըրբանուէր խաղաղութեան և իմաստից հան-
ճարոյ

Պատըսպարան է անքոյթ , անմատչելի բնաւից
յուզմանց ,

Աստ երբեմն և իմ , մանուկ նըժդեհ դեռահասակ ,
ի խընդիւր ելեալ տենչամբ իմաստութեանըն տա-
ճարին ,

Իբր ըզժարաւ եղջերուի դիմեալ յաղբիւրն յագե-
ցութեան ,

կըրթասէր սանւոյ ճըգամբ առ ոտըս հարցըդ
դեգերիլ .

Սըխրանայր յայնժամ սիրտ իմ 'ի դըպրութեանց
ասպարիզին ,

ընթանալով ճանապարհ ոչ առապար տատասկա-
ծնունդ ,

Այլ հեշտին և ծաղկաւետ բուրաստան սաղար-
թաճեմ ,

Ճոխ 'ի հոյլս երանդաշատ պէսպէս բուսոցն իմա-
նալի ,

Որով պըսակ անթառամ է վարսակալ ածել 'ի
դլուխ .

Երանի՛ որում մանուկ եղաւ ըզթագն անզուգա-
կան ,

Եւ յարբունս հասեալ դիտաց պահել զաւանդն
այն անարատ :

Ի ՄԱՀԻՃՍ ՄԱՀՈՒ

ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Ասաց անըզգամն ոչ գոյ Սատուած յաւիտեան ,
Եւ հաճոյից կենաց բազմեցաւ 'ի սեղան ,
Կեր արբ ուրախ եղեւ և ոչ այլ ինչ հոգաց
Բայց միայն ըզհրրճուանս և ցանկութիւն կամաց ,
Բայց միայն ցովութիւն , հոմանի և սեղեխ ,
Խաղ և խընճոյք և շատ զեղխութիւնք ծայրայեղ .
Կարծեց խօլն հեշտութեանց անանց գոլ ըզպայման ,
Կարծեց թէ խընդութեան աւուր չէ վաղորդայն ,
Կարծեց եթէ մոլին կեանս այս է անըսպառ ,
Թէ չէ մահ , այլ անմահ կարծեց զանճըն յիմար ,
Թէ իբրու նաւ հասեալ մէջ նաւահանդըստի ,
Խարխալ արկանէ մարդ 'ի ծոց այս աշխարհի ,
Եւ մընայ անյողդողդ և անսասան յալեաց ,
Նոցա սաստն յարածուի ծաղր ու ծանակ արած :

Բ.

Սակայն պէտք է մեռնիլ . ո՞վ կը ժըխտէ թէ մահ
 Անագորոյն սըփռէ չորս կողմ սարսափն ու ահ .
 Ամէն մարդ գիտէ զայն , ամէնըն վըկայէ ,
 Բայց այն զոր չըգիտէ մահու վըճուեալ ժամն է :
 Այն պէտք են մեռնիլ . պէտք է որ այս մարմին
 Ախտաւոր և տըկար հաշի բոլորովին .
 Պէտք է որ 'ի հողոյ շաղեալ փըցուն զանգուած
 Դառնայ անդրէն 'ի հող , զերթ կաւ բըրտի փըշրած ,
 Եւ այն որ քաջաւողջ պայծառ կենօք փայլէր
 Պէտք է որ նըլաղի , նեխոտի ցեցակեր ,
 Որդնալիր և գիշին փոսոյ մը մէջ թաղուած
 Այն որ երբեմն աշխարհս անսահման էր կարծած ,
 Այն որ երբեմն իշխան տիրէր միահեծան
 Ծովու և ցամաքի և սանձէր ըզգազան ,
 Արգելոյր ըզկայծակն և հըլու առնէր զայն ,
 Սըլանայր սուր մըտօք մինչ 'ի յերկնից կայան :
 Տըղայ և ծերունի , հարուստ և չըքաւոր ,
 Թագուհի գեղապանծ , փառահեղ թագաւոր ,
 Իմաստուն և անմիտ , մեծ և փոքր հաւասար ,
 Ի մի ձոյլ , ինչպէս խառն 'ի հօտին է ոչխար ,
 Զոր կը տանին 'ի սպանդ , կամ զերթ աւաղոյ կոյտ ,
 Ընդ որ աւել ածեալ տանին ալիք յանդունդ .
 Նըման այս աւաղոյ կուտին , և այս հօտին ,
 Մահն ըզմեզ հարթ առնէ 'ի ստորեւ իւր քօղին ,

Եւ այս վարագուերին ներքեւ , զոր նա ձրդէ ,
 Զամէն անհարթութիւն հողոյ հաւասարէ :
 Ամէն իղձք և բաղձանք և խորհուրդք մեծամեծ ,
 Դուռոց հրպարտութիւնք և բուռն կիրք տրխեղծ
 Փարատեալ շիջանին , ներվակեալ 'ի դամբան ,
 Եւ զամէն ծածկէ «Այս է տապան հանդըտեան »

Գ .

Այս հանգիստ միայն անդանօր է օրէն .
 Ո՛ր այլուր կենաց մէջ մարդիկ հանգչել կարեն .
 Եւ ի՞նչ կ'արժէ այնքան ցաւոց և վրշտաց նիւթն ,
 Արդեօք կ'արժէ՞ որ մարդ ցաւէ ընդ իւր կորուստն :
 Ի՞նչ է կեանքն , եկ տեսնենք և քննենք զայն ուշով .
 Ծընանի մայր ցաւով և տըղայն դայ լալով ,
 Երախայ է անմիտ , և մանուկ անըզգայ ,
 Պատանի խըստերախ , պատրանաց ենթակայ ,
 Դիւրազգաց , և 'ի յոյզըս կըրից բուռն անտանձ .
 Երիտասարդ , երած , վրհատեալ , սըրտախանձ ,
 Յաճախ յուսակըտուր , յամենայնէ լըքեալ ,
 Ինքն ինքեան իբր ըստուեր 'ի յերեր տատանեալ .
 Այր , ընդ բեռամբ ծանու խոնարհեալ ողնաբեկ ,
 Անթուլ աշխատաւոր և անխոնջ յերթեւեկ ,
 Ծերունի , ախտածէտ , հիւանդ և ցաւագար ,
 Անդամալոյծ և խուլ , խեղ և հաշմ և անկար .
 Միայն 'ի գերեզման ոտիւք արագաքայլ

Ամէն ժամ մէկ մէկ մասն անոր կենաց տարեալ •
 Թէ մանուկ և թէ ծեր , դերի է նա կարեաց
 Որ բուռն զօրութեամբ իշխեն վերայ կենաց •
 Նօթի և ծարաւի , հարկ ապրուստ հոգալոյ ,
 Ի տօթոյ և ցըրտէ հարկ պատըսպարելոյ ,
 Եւս առաւել հարկեր անհրաժեշտ մըրցելու ,
 Բիւր վրտանգաց ընդդէմ և բիւրուց կըրքերու ,
 Բիւրաւոր գըրգռութեանց և ախտից մարմնական ,
 Որոց յաճախ անդօր է լինել յաղթական ,
 Որք հիւծեն և մաշեն ըղմարմինն ապիկար ,
 Աչք խորեալ , դէմք դըժգոյն են , վըտիտ և նիհար ,
 Եւ յաճախ այսպիսի կենօք դըժոխըմբեր
 Նախ քան ըղծերութիւն զառամեալ կիսամեռ ,
 Նախ քան ըղմահ մեռեալ և կամ վաղամեռիկ ,
 Երթայ զուր նահատակ 'ի կենաց դասալիք •

Դ.

Մեռնիլ վաղամեռիկ 'ի ծաղիկ հասակի ,
 Թողլով կենաց վայելքն և շըրջանըն թերի ,
 Մեռնիլ պատանեկիկ , կամ ժիւ երիտասարդ ,
 Ա՛հ , գիտեմ , յիրաւի , ոչ ոք հաճի ընդ այդ • • •
 Բայց ի՞նչ այս մահուն մէջ կայ դըժկամակելի
 Որ այնքան ծանրաբեռն և դառնաղէտ թըւի •
 Մի թէ մահ չէ՞ վախճան մարդկային ցաւերու ,
 Եւ եթէ դարերով ասլրէր մահկանացու ,

Ոչ դարձեալ մեռանէր , և թէ դար մի յետոյ
 կամ կանխաւ ծընանէր , չէր դարձեալ տանելոյ
 'իւրոշմեալ 'ի ճակատ մահու դատակրնիք ,
 Մեռնողն է զառամեալ թէպէտ լինի մանկիկ :
 Եւ արմատն իսկ հանուրց նոյ իննհարիւրամեայ
 եւ ճոխացեալն ամօք հազար Մաթուսաղայ
 Ոչ առաւել քան զայն են որ ապրի օր մի .
 եւ բիւր հազար թէ ամք յաջորդեն ըզկրնի ,
 վաղիւն է միշտ երեկն , իրարու յար նըման :
 իսկ արդ մահն է միշտ մահ , կանուխ կամ անագան :

Ե.

Հըռոմ 'ի ծայր փառաց հասեալ անզուգական ,
 Փայլէր քաղաքամայր տիեզերաց համայն ,
 Որ ծագաց մինչ 'ի ծագ աշխարհի յաղթական
 Տարած էր աննրկուն զէնքն հըռոմէական ,
 Յեզերաց Տիբերի յեզերըս Գանգիսի ,
 եւ յԱլպեանց մինչ 'ի ծագս ալեւոր Մասիսի ,
 Օրէնքս և սլատուէր բաշխէր բոլոր ազանց ,
 կապիտուլիոնին յանմատչելի բարձանց .
 Արիք և Անարիք , որք են իրան թուրան ,
 Թարգմանեալ 'ի հայու մա երան և Տաներան .
 Հըպատակեն նըմին մինչև 'ի Քուշաստան ,
 Լիբիա , Բարբարոսք և բոլոր խրժաստան .
 Մինչ 'ի Դարբանդն , ուրէ Դուռն երկաթի անոք ,

Բայց Աճուճն և Մաճուճ, որ է Գողն և Մաղող,
 Ասիա, Ափրիկէ, Հայաստան, Եդիպտոս,
 Եւ Կըլէոպատրա ընկճած, 'ւ Անտոնինոս
 Զիւր բաղդըն ապառուժ կընքած էր յԱկտիոն,
 Հոկտաւիանոսի թողեալ կայսերութիւն,
 Որ զաթոռն իւր հիմնեց հասարակապետութեամբ
 Աւերակաց վերայ և եռապետութեան:
 Քառասուն և չորս ամբ իշխեց կայսր Օգոստոս,
 Եւ Հըռոմ քան զերկինքս բարձրացաւ գոռող:
 Շըռայլութիւն այնքան տարածէր անդ յայնժամ
 Որ յակինթ և զըմբուխտ խառնէր 'ի համադամ,
 Եւ ժողովուրդ մարդեալ ցոփութեանց 'ի հանդէս,
 Խընդրէր հանապազօր միայն հաց և իւրիւն:
 Իմաստուն խորհըրդովք փայլէր անդ Ագրիպպա,
 Վիրդիլ էր իւր քերթօղ, մըտերիմ Մեկենաս,
 Մեկէն, զորոյ անուն անմահացոյց վիրդիլ,
 Վիրդիլ, որ ըսփոփեց ըղցաւս անպարագիւր
 Կայսերական սըրտին խոցելոյ կարեւիւր
 Մահուամբ Մարկեղոսի միամօր որդւոյ իւր,
 Մահուամբ ծաղկահասակ որդեգրին Կայիայ,
 Եւ միւս սիրեցելոյն, դեռահաս Լուկիայ:
 Որոց կայսրըն փոխան որդեգրեաց ըղճիբեր,
 Ըղճիբեր, Լիվիայ զորդին արիւնահեղ...
 Առ նըմին կայսերաւ եկաց Ովրատիոս,
 Որ եդ չափ և պայման արհեստին քերդուածոց,
 Առ նովաւ Կիկերոն, զոր ըսպան չարաչար,
 Առ նովաւ և Ովիդ, զոր աքսորեաց Կեսար:

Հուսկ առ նովաւ խաւար փարատեցաւ նրսեմ,
 Ձի փըրկիչ աշխարհի ծընաւ 'ի բեթղեհէմ:
 Հիւպատոս, Տըրիքուն, և քահանայապետ,
 Կայսրը ծիրանաւոր, հայրենեաց հայր և պետ,
 Ամօք եօթանասուն և հընգիւ զառամեալ,
 Զախտ մահու ջեռանէր, փառաց 'ի ծագ հասեալ:
 Եւ այն որոյ 'ի ձեռն երկրիս երասանակ
 էր, անկաւ 'ի մահիճ մահու, մարդ հասարակ.
 Քայց խորագէտ մըտօք գեր 'ի վեր սոփեստես,
 Որոյ համար ըսին քերթօղք զըրոյց այսպէս,
 « Թէ չէր պարտ ծընանիլ կամ ոչ թէ մեռանիլ »,
 Դարձաւ առ ժողովեալս զիւրեւ սըգատեսիլ,
 « Աղէ, հարցուց, ըսէք ինձի եթէ ի՞նչպէս
 Ես կայսրըս խաղացի ըզկենաց ըզհանդէս,
 Եթէ լաւ, խընդացէք և ծափս հարէք, հապա »
 Եւ կայսրըն մեծազօր զայս ասացեալ, խընդայ,
 Եւ ընդ մէջ ակըմբին բիւր ծափահարութեան,
 Խըփէ զաչս և զողին փըչէ արիական,
 Շընական հեգնութեամբ անարգելով ըզփառս,
 Որ 'ի կարդ դիւցազանց դասէր անմահ 'ի կեանս :

Սոյն օրինակ երբեմն Ըսպանիոյ արքայն
 Կարողոս հինգերորդ, Օգոստոսի նըման
 Աշխարհակալութեամբ և բաղդիւ աջողակ,
 Որ 'ի դերմանական կայսրութիւն վերելեակ
 Եղեւ և յաղթական Եւրոպական ազանց,
 Թողեալ ըզդաւազան և ըզդահ գերասպանժ,

Այլ ոչ Օգոստոսի հեգնութեան հետեւող ,
 Էջ 'ի վանս Յուստինեայ , որ 'ի յեպրամատոր .
 Եւ մըտեալ 'ի թագաղ , պատուէր տայր միանձանց
 Պաշտօն հանգուցելոյ կատարել անդ անկարծ .
 Որոց ողբերգական ընդ մէջ ձայնարկսւթեան
 Աւանդեց զիւր ոգին կայսրն միահեծան :

Հեթանոս կեսարու և քրիստոնեայ կայսեր
 Երիցըս գերադաս , Հեթումն աստուածասէր ,
 Պարծանք ազգիս Հայոց , և սըրտիս սիրական ,
 Որոյ շատ պատիւներ ըրաւ թաթարաց խան ,
 Օր մ'արքունի փառացն իւր հըրաժեշտ տուեալ ,
 Եւ կըրօնաւորի քուրճն և խորդ ըզգեցեալ ,
 Հեզահոգի վարուք , ողորմած և խոնարհ ,
 Եկաց ժուժկալութեան օրինակ չընաշխարհ ,
 Եւ իջեալ 'ի բարձանց կիլիկիոյ գահոյն ,
 Առանձնացաւ 'ի վանս և հանգեաւ սըրբակրօն ,
 Մաղթելով Լեւոնի ըզկոյս տէրունական ,
 Եւ լոյս ամենեցուն ըզսուրբ խաչն օգնական :

Յետ այնքան հըղօրաց որք մերթ դողացուցին
 Մերթ զաշխարհ փառայեղ փառօք շըլացուցին ,
 Մերթ իմաստուն մըտօք իբր աստղունք փայլեցան ,
 Յետոյ թողին 'ւ 'ի հող ուստի էին դարձան ,
 Յետ Օգոստոսներու 'ւ Աղեքսանդրոսներու ,
 Սողոմոն և Սոկրատ և յետ այլ շատերու :

Որք փառաց սահմաններն ըրին անմերձելի ,
Եւ բաց յանուանէ ինչ չըթողին յաշխարհի ,
Հաւատա՛ ինձ , լաւ է մեռնիլ քան եթէ կեալ ,
Զի գէթ յանմահութիւն մընայ մարդկան յուսալ :

Զ.

Ա. փանց վոսփորոնի վերայ գեղածիծաղ ,
Հողմահար զովագին ալեաց հանդէպ ծանծաղ ,
Բաղձրադիտակ կանգնէր ամարանաց զըւարթ ,
Զոր պատէր ծառաստան շուրջանակի անհարթ ,
Բըլրակ մի որուն ծագ փայլէր դալարագեղ ,
Ծաղկունք որոց բուրմունք սըփռէին անուշեղ ,
Նոճիք երկնաճեմից , ուռենի վարսագեղ ,
Որոց ոստն ու տերեւ խոնարհէր առ 'ի շեղ ,
Որոց մէջ երգէին թըռչունք հանապազօր :
Այսքան վայելչութիւն զերթ դըրախտ երկրաւոր
Զարդարէր զայս վայրերս և զայս բընակարան ,
Որուն մէջ յօրանայր , իբր արքայ յիւր ոստայն ,
Մեծատուն մի որ ոչ զընչիցն հաշիւ գիտէր ,
Ոչ ըզմարդկան որ այնրմ երկիրպագանէր :
Ոչ վեհանձն և ոչ ռիշտ և ոչ առատաձեռն ,
Եթէ էր իսկ ագահ , բայց ոչ թէ անյագ էր ,
Բաղդին ամէն շնորհաց եղած վիճակաւոր ,
Կ'ապրէր ինչպէս ապրի սոսկական մէկ զինուոր ,
Պատրաստ 'ի յարձակումն անվեհեր ամէն դին ,

Ուր կոչէ անյապաղ զինք ձայն զօրավարին :
 Այսպէս աշխատեցաւ բաւական տարիներ ,
 Առանց մէկ հանդիման , զիզեց շատ գումարներ :
 Վերջապէս եկաւ օր , օր գումարեր մահու ,
 Յորում օրհաս կանգնած առ մահճօք մահացու ,
 Անողոք գոչէ մեզ մրտանել 'ի ճամբայն ,
 Որուն ծայրն անվերջալ ելանէ 'ի դամբան :
 Ոչ գանձք , ոչ գիտութիւն , անղօր է ամենայն
 Այն ատեն , թէ և մէկն է կրրէսոս արքայն ,
 Կամ հրմուտ և ներկուռ մինչ 'ի վեցհաղարեակ ,
 Եւ կամ Շիրակացւոյն 'ի Հանքաշէջանակ :
 Մեծատունն ընտանեօք պատէր շուրջանակի ,
 Կին և եղբայր 'ւ օրդիք , աղդականք 'ի սրդի ,
 Սրբբերով զարտասուս որ զաչերըն թանայր ,
 Եւ ճընշելով ըզխինդն որ 'ի սիրտ ընդանայր . . .
 Մէկ մ'ի կրնն և յորդիս , մէկ մի շուրջնա հայեր ,
 Մէկ զանցեալն ըզմրտաւ կենաց պայմանս ածէր ,
 Մէկ զուշին յոր գընալ մընայր առաջիկայ ,
 Թողեալ զամեն գործերըն երեսի վերայ ,
 Թողեալ ըզփառաւոր պալատըն ծովամերձ ,
 Ոսկեթել ոսկեհուռըն պատեռամբ հանդերձ :
 Բայց այն որ առաւել տագնապ էր իւր սրբաին ,
 Առաւել քան ըղտուն , քան զորդին և ըղկին ,
 Առաւել քան զամէն ինչ որ է յաշխարհի ,
 Բաժանումն էր գանձուցն ոսկւոյ և արծաթի :
 Այն , գոչեց , իւր յետին շունչըն փրչեալ յայս բան ,
 Միթէ կայ ինչ արդեօք անդըր քան ըզդամբան ,

Որ արժէ զիմ գանձերն 'ի յաւիտենութիւն . . .

Ո՛վ տէր , ոչ թէ ընդ վայր ասացեր « Դիւրագոյն
Մալխոյ ընդ ծակ ասղան եղիցի անցանել ,
Գան թէ յարքայութիւն մեծասան մըտանել » :

Է.

Երանի՛ աղքատին 'ի մահիճըս մահու ,
Երանեալ է թըշուառն յայնմ ահեղ 'ի պահու .
Նա չունի 'ի թողուլ գանձուց ըշտեմարան ,
Հարրատութիւնք անբաւ կուտակեալ քըրտնաջան .
Նա չունի ծովափանց վերայ ամարանոց ,
Ապարանք փառաւոր շէն քաղաքաց 'ի ծոց .
Զ'ունի անգին զարդեր և օղք մարդըրտայեռ ,
Զ'ունի ակունք ազնիւ և բեհեզեայ բաստեռ ,
Եղկելին մի գուցէ օրական չունի հաց ,
Գուցէ չունի մէկ յարկ , գուցէ և ոչ մի բարձ ,
Եւրոյ վերայ գընել ըղգըլուխն անտէրունջ ,
Փոքրիկ մի անկողին ուր հանգիստ առնէ չունչ ,
Ուր ցաւագին անդամքն և վըշտացեալ մարմին ,
Յետ առօրեայ անդուլ աշխատանացն 'ի դին ,
Պահիկ մի դադարեն 'ի քուն խաղաղական ,
Պահիկ մի թոյլ առնու այս ոգին փութաջան ,
Պահիկ մի այս ճակատ պարզեալ և խընդաղին
Փարատէ իւր հող երն ու սըրբէ իւր քըրտին :

Քուցէ չը կայ մէկ ձեռն 'ի ճըմել միանգամ,
 Չունի մէկ ազդական, և ոչ իսկ բարեկամ,
 Չունի լըսած երբէք անուշ մըխիթարանք,
 Որ ըսփռիէ իւր սիրան ու սրբէ անոր ժանգ,
 Խօսք մի սիրայորդոր, ձայն մի խընդակցութեան,
 Չայն խըրախոյս տալոյ, կամ ձայն տըխրակցութեան:
 Թէ ունի կին և ուստր, անոնց ողբըն լըսէ
 Հանապազօր քաղցի, զոր ո՞յազեցուսցէ:
 Լըքեալ և պարտասեալ, խեղճն յամենայնէ զուրկ,
 Չը գիտէ ինչ կերպով սրբել զանոնց արցունք:
 Ո՞ր մէկ վիշտըն թողու, երթայ տարաբաժին,
 Կամ ընդ ո՞րըն տըրտմի չը լինել անմեկին...
 Բոլոր կեանքն է եղած անվերջ մի ապաշաւ,
 Հողն էառ զիւր քըրտին և վարձըն զըլացաւ,
 Հողմունք տարան ըսփիւռ ցըրեցին անոր ջանք
 Աստանդական 'ւ ամուլ, և չ'եսուռն արձագանք.
 Լեղի խառն ընդ մըրուր ըմպեց ջուր շիթ առ շիթ
 Հացն 'ի մոխրոյ շաղեց և 'ի ձանձախարիթ:
 Այսպիսի տառապեալ կենցաղավարութեամբ,
 Եղած էր նահատակ հանապազօր արեամբ.
 Ինչէ՞ կըրնար զրկել զինքն երբ հասանէր մահ,
 Ոչ ինչ ունէր կորուստ, այլ ամէն էր 'ի շահ.
 Մահ զնա փըրկելով յամէնօրեայ ցաւոց,
 Դառնութեանցն էր վախճան, ըսպեղանի 'ի խոց.
 Այնուհետեւ երբէք ոչ քաղց և ոչ ծարաւ,
 Ոչ սարսուռ 'ի ցըրաէ, ոչ տօթագին հարաւ,
 Եւ ոչ մի ինչ երկիւղ կըրնար նըմին ազդել,

Եւ ոչ մի ըղդացմամբ սիրտն անըղդայ բախել :
 Եղկելին զիւր հանգիստ ի ծոց մահու առեալ ,
 'ի քուն յաւէժական կըրնար գըտնել դադար ,
 կըրնար իւր քաշած վիշտքն իրեն թեւ հոլանել ,
 Այնով յերկինս 'ի վեր սըլացեալ հասանել ,
 Այն որուն որ աշխարհս եղած էր քաւարան ,
 կըրնար յանդորր յերկինըս խընդրել օթեւան ,
 Այն որ հետեւելով բանին տէրունական ,
 Խաչն 'ի յուս էր շալկած 'ի կենաց Գողգոթայն :

Ը.

Ոչ մեծատան նըման ապրեցայ ես փարթամ ,
 Ոչ կարօտով հացին եղէ մուրացական ,
 Ոչ յաթոռս ոսկեհուռ բազմեցայ դահերեց ,
 Ոչ դետնաքարչ կենօք տըքնեցայ իբր ըղցեց .
 Յանդորրու մանկութեան կեցի քիչ տարիներ ,
 Եւ յետոյ ալէկոծ և շատ ևս 'ի յերեր ,
 Աւելի շատ տարտամ և տառապեալ կենօք ,
 Փոքր ինչ այլ խընդութեան արագաթռիչ ժամօք :
 Այս ամէնն անցաւ փոյթ զերթ սըլաք սըլացեալ ,
 Վաղանցուկ օրերու ըստուեր անհետացեալ ,
 Ոչ հետք մի հաճոյից , ոչ յուշ խընդութենէ ,
 Միայն արտօսր ու կոծ հոգւոյն դառնութենէ
 Մընացին , ընդ որովք ճընշեալ քան ընդ ամօք ,
 Ծանրաբեռնի մարմին և քարչի ըղդեանովք ,
 Հեշտագոյն քան ըղլարդ թորշովեալ դալկահար

Այն որքան ըղպողպատն էր անտաշ անվրթար ,
 Եւ երիտասարդի թաքմ ճակատուն վրայ
 Տարածամ կրնճուց բոյլ բիւր ակօսներ բանտ . . .

Թ .

Տըրտում է անձն իմ մերթ և հողի դառնացեալ ,
 Յաճախ 'ի լոյս պայծառ զիս կը պատէ մըռայլ ,
 Յաճախ աչք իմ ցօղեն և սիրտ իմ լըքանի ,
 Երբ բեռինք ծանրանան և ճընշեն զիմ ողի ,
 Յորժամ ախտք և մարմնոյ տիրեն հիւանդութիւնք
 Եւ մարդկային բնութեան կըցորդ տըկարութիւնք .
 Մանաւանդ յորժամ հեռ, նախանձ և գըրգռու
 թիւնք ,

Անհաշտ ատելութիւնք և անիրաւութիւն
 Ձընկերն ընկերին դէմ զինեն անխըղճաբար ,
 Մագլօք և ճիրանաւ պատառոտել զիրեար ,
 Ձերթ վագերք , յովաղունք և գիշակեր դաղանք :
 Յայնժամ սիրեմ ըզմահ , յայնժամ ատեմ ըզկեանք :
 Կըսեն սակայն թէ կեանք 'ի մահիճըս մահու
 Գեր 'ի վեր է անթիւ անհատնում գանձերու ,
 Թէ յառաջքան թողուլ զայս պատեան հողեղէն ,
 Ոգւով չափ մըրցի նա ընդ մահ ըստառաղէն ,
 Թէ Բանն Աստուած ինքնին բնութեամբ ըն մարդ
 կեղեն

Ձը հանդուրժեալ դռչէր. Անցո՛ղբաժակս յինէն :
 Բայց ոչ թէ երկիւղի էր ձայնն աստուածային ,

Այլ առ 'ի դու թ մարդկան որոյ ոչ գիտէին
 Զեղեռն յանիրաւի և զգին սրեան հեղլոյ,
 Որ 'ի ժանեաց մահուն զինքեանս էր փըրկելոյ :
 Այնուհետեւ մահուամբ նորին ըսպանեալ մահ ,
 Արդարն ոչ երկընչի , ըստ բանին եղիշայ .
 Որ ըզմահ ոչ գիտէ . խորշի 'ի նըմանէ ,
 Իսկ այնքմ որ գիտէ , մահ անմահութիւն է :

Ժ.

Ի յերկինս , 'ի յերկրս , ասդ է մեր օթեան ,
 Զորպատրաստեաց որդւոց իւրոց աջ տէրունեան .
 Որ ոչ անձկաւ գիմէ յերկնաւոր 'ի դարաստ ,
 Լաւ համարեալ ընդ քարշ յածիլ 'ի վայրի աստ ,
 Նըման է առնն ճոխ , տանուտեառն ժըլատ ,
 Որոյ են հոյակապ դարպասք և մեծ պալատ ,
 Պարտէզք գեղածիծաղ , զինչ դըրախտ փափկու-
 թեան ,
 Գանձք անհատնում ոսկւոյ , հըրապոյրք հեշտու-
 թեան ,

Որ զայս այլովքն հանդերձ բարձի թողի առնէ ,
 Եւ երկիւղածօրէն ըզհաց իւր խընայէ ,
 Երթայ աշխատ լինի անխոնջ իբրու վարձկան ,
 Սողայ գեանախըշտի , յորջս է նորա կայան ,
 Զառնու երբէք դադար , ոչ 'ի քուն լինի նա ,
 Մինչև մահու մանգաղն հընձէ զինքն անխընայ :

Ողջոյն , ո՛վ Գողգոթա , ֆառաթեւեան , ողջոյն ,
 Որ հողանեալ կանգնիս 'ի գոյժ Մահացելոյն ,
 Փարոս բարձրադիտակ , աստղը բեւեռային ,
 Առ որըս անքըթիթ նաւաստոյն աչք յառին ,
 Մարդ—Աստուծոյն երբեմն հեծելութեան խորան ,
 Ծառ մահու և կենաց տընկեալ աղդի մարդկան ,
 Որ 'ի կող դահավէժ Գողգոթայիս վըշտաց
 Հանապազօր գայթիւք դեգերի հողամած ,
 Եւ այս հառաչանաց վայրիս մէջ անխըտիր
 Իւրաքանչիւր փըրէ զիւր փոսն առ ոտամբ իր ,
 Իւրաքանչիւր իր խաչն ունի բարձեալ 'ի յուս ,
 Իւրաքանչիւր կըրէ զայն 'ի Գողգոթա կոյս :
 Այո՛ , կեանք Գողգոթա , և մարդն ինքնին է խաչ
 'ի տիպ չորեքթեւեան ըստեղծեալ նախ առաջ ,
 Եւ յօրէ ծընընդեան դատապարտեալ 'ի մահ ,
 Առ որ կենաց դըրունք յորդեն ըղճանապարհ ,
 Ճանապարհ հեծութեանց , կընքեալ 'ի Գողգոթա .
 Ուստի բարձունք անմահք նըշմարին թափորայ :
 Ողջոյն , դարձեալ ողջոյն , քառաթեւ տէրունեան
 Հեծելութիւն բոլոր զինուորացս հեծութեան ,
 Ըղբեղ ողջունէ մարդն յարգանդէ կենսատու ,
 Ըղբեղ ողջունէ նա 'ի մահիճըս մահու . . .


Յ Ա Ն Կ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

	12
ԾԱՌ ԿԵՆԱՅ	9
ԾՈՒՌ ԱՇԽԱՐՀ	14
ԳԱՂՏՆԻՔ ԵՐԱՆՈՒԹԵԱՆ	20
ԱՐԾԱԹ	25
ԽԸՆԴԻՐ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ	31
ԱՆԿ ԼՈՒՍՆՈՅ	33
ԽՈՐՔ ԽՈՐՈՅ	42
ԾԱՂԿՈՅՔ ԿԵՆԱՅ	54
ՏՈՒՓ ՊԱՆԴՈՐԻ	59
ՖԻՐՏԷՎՍԻ	69

Մ Ա Ս Ն ԵՐԿՐՈՐԴ

ԽԻԿԱՐԻ ԿՏԱԿԸ	77
ՀԱՅԱՍՏԱՆ	80
ՑԱԻ	82
ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆՑ	87
Ի ՄԱՆՈՒԿ ԴԵՌԱՀԱՍ	90
ՄԱՂԹԱՆՔ ՄՕՐ ՈՐԴԵԿԻՆ	92
ԻՂՋՔ	94
ԵՐԳ ԲԱՂԱՆԵԱՅ	96
ԵՐԱՆՈՒՀԻ	100
ԲԱՂԴ	103
ԱԼԷԿՈԾՈՒԹԻՒՆ	105
ՏԷՐ ԶՕՐՈՒԹԵԱՆՑ	107
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ	108
Ի ՄԱՀԻՃՍ ՄԱՀՈՒ	111



ՀՀ Ազգային գրադարան



NL0243661

